# ՀԿԽԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## Մենք օգնում ենք Ձեր օգնությամբ

# ARCS

ARMENIAN RED CROSS SOCIETY



# 2013

## Տարեկան Զեկույց

## Annual Report

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of the Red Cross and Red Crescent International Movement

## ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
## HUMANITY

## ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
## IMARTIALITY

## ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ
## NEUTRALITY

## ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
## INDEPENDENCE

## ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
## VOLUNTARY SERVICE

## ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ
## UNITY

## ՀԱՄԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ
## UNIVERSALITY



Արդեն գրեթե մեկ դար է, ինչ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը գործում է Հայաստանում՝ հնարավորինս օգնելով, սատար կանգնելով ամենախոցելիներին ու կարիքավորներին:

Մեր առաքելությունը որքան դժվար, նույնքան էլ հեշտ է, քանի որ մեր աշխատանքի արդյունքում լսում ենք երախտիքի բազմաթիվ խոսքեր ու տեսնում շնորհակալությամբ լի աչքեր: Դա մեզ ավելի է ոգևորում և դրդում, որ կրկնապատկենք, եռապատկենք մեր ջանքերը, որպեսզի օրեցօր դժվարացող այս կյանքում կարողանանք մեր հասարակության առավել խոցելի խավերի հոգսը մի փոքր թեթևացնել:

Այս մեկ տարվա ընթացքում ՀԿԽԸ-ն շարունակել է իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝ սոցիալական աջակցություն և առողջապահություն, աղետներին պատրաստվածություն և արձագանքում, բնակչության տեղաշարժ, առաջին օգնության հիմունքներ, Կարմիր խաչի հիմնարար սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածում, որոնում և ընտանիքների վերամիավորում, երիտասարդական, միջազգային համագործակցություն:



Armenian Red Cross Society has been serving the weak and the vulnerable in Armenia for over a century now. Our mission is  difficult and still an enjoyable one, for at the end of the day it's rewarded with grateful eyes and words of thankfulness. This is the food for our inspiration and determination in multiplying our efforts to improve the lives of the most vulnerable groups.

During the year Armenian Red Cross Society continued its activities in the following main directions: Social Ssupport and Health Care, Disaster Preparedness and Response, Population Movement, First aid, Dissemination of Red Cross Fundamental Principles and humanitarian values, Tracing and Reunion of families, Youth and International Activities.

Armenian Red Cross Society has been instrumental in supporting our displaced compatriots from Syria last year, by rapidly mapping their urgent needs and giving a hand of support to each family. Over one third of the 12 000 Syrian Armenians established in the country have become our beneficiaries. And we continue to extend our support to the displaced groups.

Հայկական Կարմիր խաչի ընկերության անցյալ տարվա լուրջ ձեռքբերումներից էր Սիրիայից մեր հայրենակիցների մեծ ներհոսքի պայմաններում նրանց կարիքների գնահատումն ու օգնության ձեռք մեկնելու համար արդյունավետ քայլերի ձեռնարկումը: Հայաստանում հաստատված 12 000 ավելի սիրիահայերի մեկ երրորդը մեր շահառուները դարձան: Այս ուղղությամբ մեր առաքելությունը դեռ ավարտված չենք համարում, և շարունակելու ենք սիրիահայերին Մայր հայրենիքում մշտական հաստատվելու գործում մեր համեստ ներդրումն ունենալ:

Մեր անձնակազմի ու կամավորների նվիրված ու անշահախնդիր աշխատանքի շնորհիվ ավելացել է մեզ վստահողների ու մեզ հետ համագործակցողների թիվը: Այդ կապակցությամբ շնորհակալություն ենք հայտնում բոլոր կամավորներին, բարերարներին ու գործընկերներին, որոնց մարդասիրական ոգու շնորհիվ իրականություն են դառնում մեր ծրագրերը:

Այս պահին էլ աշխարհի տարբեր ծայրերում ու նաև մեր տարածաշրջանում պատերազմներ ու ճգնաժամեր են ընթանում: 21-րդ դարում մարդիկ դեռ շարունակում են տառապել բռնությունից, սովից ու հիվանդություններից:

Մարդասիրությունն է այն միակ ուժը, որի շնորհիվ հնարավոր է, եթե ոչ կանխարգելել, ապա գոնե մեղմել մարդկային տառապանքները: Բոլորս ենք պարտավոր միավորվել այդ գաղափարի շուրջ՝ մեր կողքին ապրող և օգնության կարոտ մարդկանց ձեռք մեկնելու համար:

Due to the dedicated efforts of our volunteers and the professional staff, we constantly expand the circle of our collaborators and partners. We will never stop thanking our volunteers, sponsors and supporters whose efforts help us to translate our inspirations into successful projects.

Violent conflicts and crisis happen next door at this very moment too. In the 21st century people continue to suffer from hunger, diseases and violence. Humanism is the sole power that can reduce human suffering if not prevent it from happening. We all should stay united around the idea to help those in need who live next to us.

Մխիթար Մնացականյան
Նախագահ
Mkhitar Mnatsakanyan
President

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար
Anna Yeghiazaryan
Secretary General



**Հայկական Կարմիր Խաչի Ընկերությունը** (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից:

**The Armenian Red Cross Society** (ARCS) was founded on March 19, 1920 by Spandarat Kamsarakan.

**ՀԿԽԸ կայացման ուղին**

Կարմիր Խաչն իր մարդասիրական առաքելությունը Հայաստանում սկսվել է 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Էրիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր Խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն ցուցաբերեց Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ տառապող հայ բնակչությանը:

**Review of ARCS foundation**

The Humanitarian Mission of red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | **1920** | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | **1921** | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | **1922** | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | **1925** | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն | **1992** | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | **1992** | “Gratsia” International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին | **1993** | RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով | **1993** | ARCS was recognized by the RA President’s statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | **1995** | ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ | **1995** | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | **1997** | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2001** | ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly |
| ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | **2002** | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2003** | ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva |
| Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul |
| Ավստրայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria |
| Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում | **2006** | ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens |
| ՀՀ միացավ Ժնևի կոնվենցիանեի 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը: | **2011** | RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005 |

## ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

## Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, դասակարգային պատկանելությունից, կրոնական և քաղաքական հայացքներից:

## Նախագահ

Մխիթար Մնացականյան

## Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

## Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

## Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ. |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական Կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության նախարար |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր Խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |
| Կլաուս Հիկե | Բավարական Կարմիր խաչ |
| Մայքլ Ուիբե | Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն |
| Կառլ Շայդե | քահանա, Գթության խոհանոցի ղեկավար |

## Բարերարի կոչում ստացած կազմակերպություններ

Կապանի «Դենո Գոլդ Մայնինգ քամփնի» ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն- Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

## Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 3 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3400 |
| Կամավորներ | 3200 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity, to be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population, to provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

## Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings, regardless of nationality, race, sex, religious beliefs, class and political opinions.

## President

Mkhitar Mnatsakanyan

## Secretary General

Anna Yeghiazaryan

## Honorary President

Ashot Sargsyan

## Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan | ARCS President throughout 975-1991 |
| Pier Michaud | French Red Cross |
| Gerhard Mayer | German Red Cross |
| Derenik Dumanyan | RA Minister of Healthcare |
| Gagik Martirosyan | State Minister, RA |
| Gaphur Kurmayev | Russian Red Cross, Rescuer |
| Harutyun Yesoyan | ARCS, Rescuer |
| Valeri Vardanyan | ARCS, Rescuer |
| Claus Heike | Bavarian Red Cross |
| Michael Uibel | German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch |
| Karl-Heinz Scheide | Priest, Coordinator of Soup Kitchen Program |

## Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden Wurttemberg Provincial Branch

## Overview

| | |
|---|---|
| Regional Branches: | 11 |
| Territorial Branches: | 3 |
| Community Branches: | 52 |
| Employees: | 70 |
| Members: | 3400 |
| Volunteers: | 3200 |
| “Gratsia” International Rehabilitation Centre: | 1 |
| Charity kitchens: | 3 |
| First Aid Training Methodological Centre: | 1 |
| Hotel Compound: | 1 |
| Regional Warehouse Base: | 1 |
| Training Centre: | 1 |



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում**

# SOCIAL SUPPORT AND HEALTHCARE

**With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health conditions of people in communities, the Armenian Red Cross Society implements large-scale activities in social support and healthcare spheres**

## Սոցիալական ծրագրեր

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է բազմաբնույթ սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ, փախստական ծերերի, նացիոնալ-սոցիալիստների զոհերի ընտանիքների, առավել կարիքավոր հանրակացարանաբնակ, ծնողազուրկ, ինչպես նաև հաշմանդամ երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: ՀԿԽԸ սոցիալական բաժնի աշխատանքներն ընդգրկում են մի շարք ոլորտներ՝ բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում, սննդամթերքի և հագուստի բաշխում, հոգեբանական աջակցության և խորհրդատվության տրամադրում:

### Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք

2013 թ. ՀԿԽԸ սոցիալական բաժնի կամավորներն իրագործել են «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ- հոգեբանական և բժշկական խնամք» ծրագիրը, որը ֆինանսավորվել է Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման և գերմանական «Հիշողություն, Պատասխանատվություն, Ապագա» հիմնադրամի կողմից: Ծրագրում ընգրկվել են 60 շահառուներ Երևանից, Վանաձորից, Իջևանից, Նոյեմբերյանից և Բերդից:

Շահառուները ծրագրի շրջանակներում ստացել են հոգեբանական աջակցություն, բժշկական խնամք, ամիսը մեկ անգամ՝ սնունդ, հագուստ, հիգիենիկ պարագաներ:
Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի, Լոռու մարզերում սոցիալական բաժնի կամավորները իրականացրել են նաև 210 միայնակ տարեցների համար տնային խնամք ու փոքր վերանորոգման աշխատանքներ:

### Սոցիալ-հոգեբանական աջակցություն հանրակացարանաբնակ փախստական ծերերին և երեխաներին

Երիտասարդական Կարմիր խաչի կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական աջակցություն հանրակացարանաբնակ փախստական ծերերին և երեխաներին» ծրագիրը մեկնարկել է դեռևս 1995թ.: Ներկայումս այն բաղկացած է երկու մասից՝ «Ժպիտների ակումբ» և «Սոցիալ-հոգեբանական աջակցություն հանրակացարանաբնակ փախստական ծերերին»:

Ծրագրում ընդգրկված Երիտասարդական Կարմիր խաչի 20 կամավոր այցելում են Երևանի 2 հանրակացարաններում բնակվող 70 փախստական ծերերի՝աջակցելով նրանց և սոցիալապես, և հոգեբանորեն:
Ծրագրի շահառուներին տրամադրվում են սննդի և հիգիենիկ պարագաների

## Social Programs

Armenian Red Cross Society is implementing various social programs aimed at the lonely, elderly refugees, families of national-socialists victims, most needy dormitory orphans, as well as the improvement of social conditions of disabled children.
Works of the Social department of the ARCS includes number of areas such as investigating social conditions of population, social services, food, clothing, psychological and counseling support.

### Psycho-social and Medical support to the victims of National Socialism in Armenia

The volunteers of the Social department of ARCS continued implementation of "Psychosocial and Medical support to National Socialism in Armenia" project with funding of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Responsibility, Future" German foundation. In the frames of the program 60 beneficiaries in Ijevan, Vanadzor, Noyemberyan, Berd and Yerevan were involved.

In the frames of the project beneficiaries were distributed parcels of food, hygiene supplies on a monthly basis, psychological support as well as nurse care.
Red Cross volunteers of Social Department carried out home care and little repair works to 210 lonely elderly people in Armavir, Shirak, Vayots Dzor, Aragacotn, Tavush, Lori regions of RA.

### Psycho-social support to the elderly and children refugees living in dormitories

"Psycho-social support to the elderly and children refugees living in dormitories" project implemented by Red Cross Youth launched in 1995. Currently, it has two parts: "Smiley Club" and "Psycho-social support for the elderly refugees living in dormitories".

20 Red Cross Youth volunteers, involved in the project, visit 70 refugee elderly people in two dormitories of Yerevan, providing them with social and psychological support. The project beneficiaries are provided with food and hygiene parcels, newspapers, health and entertainment magazines, compensation for electricity heating charges, participate in cultural and social events.

փաթեթներ, թերթեր, առողջապահական և ժամանցային ամսագրեր, փոխհատուցվում է էլեկտրաէներգիայով ջեռուցման վարձավճարը, կազմակերպվում են մշակութային և սոցիալական միջոցառումներ:

«Ժպիտների ակումբ» ծրագիրը մեկնարկել է 2005թ.-ից: Երիտասարդական Կարմիր խաչի 20 կամավոր հանրակացարանաբնակ 70 երեխայի համար կազմակերպում են բազմաբնույթ կրթական դասընթացներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ: Առավել ուշագրավ են ամառային վրանային ճամբարները, որոնք շփման և ինտեգրման մեծ հնարավորություն են ընձեռում երեխաներին:
Ծրագրի համաֆինանսավորողներն են Ավստրիական Կարմիր խաչը և Ավստրիական «Մեդիքոր» կազմակերպությունը:

## Օգնել. Ես կարող եմ, Դու կարող ես, Մենք կարող ենք…

Երիտասարդական Կարմիր խաչի գերմանացի և հայ 30 կամավորներ, այդ թվում նաև հատուկ կարիքներ ունեցող պատանիներ, մասնակցեցին Եվրոպական Խաղաղության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Օգնել. Ես կարող եմ, Դու կարող ես, Մենք կարող ենք…» խորագիրը կրող ծրագրին:
Ծրագրի նպատակն էր տեղեկացնել հատուկ կարիքներ ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական և կենցաղային խնդիրների մասին՝ այդ կերպ խթանելով իրազեկվածության բարձրացմանը և խնդրին վերաբերող հնարավոր լուծումների վերհանմանը:
Ծրագրի առաջին փուլը մեկնարկեց հոկտեմբերին, երբ Գերմանիայի Բադեն-Վյուրթենբերգի երկրամասից ժամանած 14-17 տարեկան 11 գերմանացի պատանիներ և 12 հայ պատանիներ մեկ շաբաթ շարունակ մասնակցեցին բազմաբնույթ քննարկումների, առաջին օգնության, առողջ ապրելակերպի և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված խնամքի դասընթացների:
Ծրագիրն ամփոփվեց հանդիպման ավարտին կամակերպված լուսանկարների ցուցահանդեսով, որին հրավիրված էին մասնակցելու ծրագրին աջակցող տարբեր համագործակից պետական, հասարակական և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչներ:

## Աջակցություն Սիրիահայ երեխաների վերականգմանը

30 սիրիահայ երեխա հնարավորություն ունեցավ մասնակցելու ամառային վրանային ճամբարին և 7 օր շարունակ ապրելու իրենց հասակակից երեխաների հետ՝ Լոռվա մարզի Գարգառ գյուղում: Վրանային ճամբարը կազմակերպել էր Երիտասարդական Կարմիր խաչը երիտասարդ կամավորների ակտիվ մասնակցությամբ, ովքեր ոչ միայն ուսուցիչներ էին, այլև լավ ընկերներ երեխաների համար: Ճամբարը, որն իրականացվեց ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ, նպատակ ուներ ինտեգրելու պատերազմից տուժած երեխաներին հասարակություն և սատարելու երեխաներին սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Ճամբարի ձեռքբերումների շարքում են՝ երեխաների հետաքրքրվածությունը ճամբարի տարբեր միջոցառումներով, իրենց ու իրենց ծնողների ակտիվ ներգրավվածությունը ճամբարում:

"Smiley Club" project launched in 2005. 20Red Cross Youth volunteers organize various educational workshops, entertainment and sporting events for 70 children from dormitories. Most remarkable are summer tent camps, which give great opportunities for integration and interaction to children.
Austrian Red Cross and Austrian "Medikor" organization are the co-financers of the project.

## Help, I Can, You Can, We Can!

German Red Cross Youth and Armenian 30 volunteers, including disabled children, participated in the "Help, I Can, You Can, We Can!" project, financed by the German European Fund for peace.
The aim of the project was to inform about social, psychological and everyday issues of children with special needs, thereby promoting and raising awareness of the problem concerning the identification of possible solutions.

The first phase of the project started in October, when 11 young people aged 14-17 years from Baden-Wurttemberg, Germany and their 12 Armenian coevals, spend a week together, participating in various discussions, First aid trainings, healthy lifestyle and disabled people care sessions.

The program was summed up by a Photo exhibition, where partners from different state, non-governmental and business organizations were invited to attend.

## Supporting Syrian Armenian children recovery

30 Syrian Armenian children have had an opportunity to participate in the summer tent camp for 7 days, living with their compeers in Gargar village in Lori region. Tent camp was organized by Red Cross Youth active young volunteers, who were not only teachers, but also good friends for children.

The Camp, wich was organized with the support of UNHCR, was aimed to integrate war-affected children in society and support children in socio-psychological perspective. Among the achievements of the initiative is children's interest in different events organized during the camp, and also the active involvement of the parents.

# Առողջապահական ծրագրեր

**Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում**

Ծրագրի շրջանակներում Երևանի երեք պոլիկլինիկաներում ամեն ամիս միջինը 30 ԴԿ ՏԲ հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, կրթում-լուսաբանում: Ծրագիրը ֆինանսավորում է «Էլայ Լիլի և կոմպանիա» կազմակերպությունը:

**Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում**

2013թ. ՀԿԽԸ շարունակում է իր գործունեությունը ՏԲ ոլորտում՝ իրականացնելով «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը հանրապետության ամբողջ տարածքով, որը Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի մասն է: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ Հիմնադրամը, որի ստացողը հանդիսանում է Առողջապահության Նախարարությունը, իսկ ենթաստացողը՝ ՀԿԽԸ-ն:

**Ծրագիրը իրականացվում է հետևյալ ուղղություններով.**

- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում ամբողջ ՀՀ տարածքով
- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին թարմ սննդային փաթեթների բաշխում ստացիոնարում, սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում պահպանողական փուլում, ձմռան 3.5 ամիսների ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում, դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյութերի տրամադրում ամբողջ ՀՀ տարածքով
- Կրթական-խորհրդատվական սեմինարների կազմակերպում ՏԲ հիվանդների համար բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով
- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն և Ռեգ ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ՈՒՎԲ (DOT) ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

2013թ. ընթացքում ՏԲ ռեգուլյար հիվանդներին բաշխվել է 5842 սննդային և 5842 հիգիենիկ փաթեթներ, դեղակայուն ՏԲ հիվանդներին՝ 4642 սննդային և 2321 հիգիենիկ փաթեթներ, բուժումը ձախողած ՏԲ հիվանդներին՝ 118 սննդային և 59 հիգիենիկ փաթեթներ:

**Իրազեկման ակցիա՝ նվիրված Տուբերկուլյոզի դեմ պայքարի համաշխարհային օրվան**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն (ՀԿԽԸ) իրազեկման ակցիա անցկացրեց՝

# Health and Care

**Stop MDR TB in Armenia**

Within the frames of “Stop MDR TB in Armenia” project 30 MDR TB patients and their family members in 3 policlinics of Yerevan city were provided with psycho-social support, education-dissemination. The project is funded by ‘’Eli Lilly and Company’’.

**Social support to TB patients**

In 2013 ARCS continues its activities in the TB sphere by implementing “Social support to TB patients” programme on the entire territory of RA, which is a part of TB National program. The program is funded by the Global Fund whose recipient is the Ministry of Health and sub-recipient is ARCS.

**The program is implemented in the following directions:**

- Provision of food and hygienic parcels to TB patients in Yerevan and RA regions with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of fresh food in the policlinics, provision of food and hygienic parcels in outpatient phase, provision of heating costs for 3.5 winter months as well as provision of juice to MDR TB patients in Yerevan and RA regions with the purpose of reducing the harmful effects of drugs
- Organization of work through consultants of working group; implementation of the educational-consultative trainings for TB patients with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of transportation costs to TB/MDR patients or social workers within Directly Observed Treatment (DOT) strategy.

In 2013 within ‘’Social support to TB patients’’ project 5842 food and 5842 hygienic parcels were distributed to TB patients and 4642 food and 2321 hygienic parcels to MDR TB patients.

**Awareness Campaign on World Tuberculosis Day**

Armenian Red Cross Society organized an awareness campaign dedicated to March 24, World Tuberculosis Day.

նվիրված մարտի 24-ի Տուբերկուլյոզի դեմ պայքարի համաշխարհային օրվան: ՀԿԽԸ Առողջապահական բաժնի աշխատակիցները և կամավորները Երևանի պետական բժշկական համալսարանից մինչև Երիտասարդական մետրո ձգվող տարածքում, Աբովյան փողոցի երկայնքով, անցորդներին բաժանեցին տուբերկուլյոզը լուսաբանող տպագիր նյութեր և պատասխանեցին նրանց՝ հիվանդությանը վերաբերող հարցերին: Ավ. Իսահակյանի արձանի հարևանությամբ տեղադրվել էր տաղավար, որտեղ ևս կարելի է տեղեկանալ տուբերկուկուլյոզով վարակվելու ուղիների և բուժման կազմակերպման մասին: Երկու ժամվա ընթացքում բաժանվեց մոտ 3000 բուկլետ:

### ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-երի շրջանում

Ծրագրի նպատակն է նվազեցնել ԹՆՕ-ների խոցելիությունը ՄԻԱՎ-ի և այլ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների նկատմամբ Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում: 2013թ. շահառուների թիվը հասել է 129: Ծրագրի շրջանակներում ԹՆՕ-ները ստացել են խորհրդատվություն, իրավաբանական, հոգեբանական, ինչպես նաև միանգամյա օգտագործման ներարկիչներ, պահպանակներ, ալկոհոլային խծուծներ: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ հիմնադրամը և իրականացվում է «Առաքելություն Արևելք» կազմակերպության հետ համատեղ:

### ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

«ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը 2013թ իր գործունեությունը իրականացնում է Վանաձոր, Գյումրի և Երևան քաղաքներում 15-23 տարեկան երիտասարդության և ուսանողության շրջանում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ ուսանողների համար՝ հավասարը հավասարին հիմունքով, ինչպես նաև «Հարց և պատասխան» սեմինարներ դասախոսական կազմի համար: Երիտասարդներին տրամադրվել են տեղեկավական նյութեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ինչպես նաև ապահովվել է խորհրդատվություն՝ այցելության և հեռախոսազանգի միջոցով: Ծրագիրը ֆինանսավորում է Ամերիկյան Կարմիր խաչը:

### Առողջ սերունդ

2011-2013թթ. «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ի աջակցությամբ երիտասարդական բաժինն իրականացրել է «Առողջ սերունդ» ծրագիրը, որի նպատակն էր պատանի դպրոցականներին ծանոթացնել առողջ ապրելակերպ վարելու հիմնական միջոցներին, ինչպես նաև խրախուսել և հնարավորություն տալ ճիշտ ընտրություն կատարել իրենց առողջությանն առնչվող հարցերում:
Հավասարը հավասարին մեթոդով իրականացվող դասընթացների միջոցով Երիտասարդական Կարմիր խաչի կամավորները դպրոցականներին ներկայացրել են առողջ ապրելակերպ վարելու հիմնական քայլերը, որոնց թվում `առողջ սննդի և ճիշտ սննդակարգի ընտրություն, էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայր, վատ սովորություններից զերծ և ֆիզիկապես ակտիվ կենսակերպ:
Յուրաքանչյուր դասընթացի ավարտին, երիտասարդ կամավորների և դասընթացներին մասնակից դպրոցականների համատեղ ուժերով, կազմակերպվել են բնապահպանական էքսկուրսիաներ և առողջ ապրելակերպը խթանող այլ միջոցառումներ:

On Abovyan Street, started from Yerevan State Medical University and near the metro station “Yeritasardakan”, ARCS health department’s staff and volunteers, disseminated printed materials, booklets and brochures, on tuberculosis.
Near the statue of Av. Isahakyan a pavilion was placed, where everyone could also learn about the ways of infection and treatment of tuberculosis.
About 3000 informative materials were disseminated in two hours.

### HIV Prevention among IDUS in Lori Marz

“HIV Prevention among IDUS in Lori Marz” project was aimed at reducing the vulnerability of IDUs towards HIV, Hepatitis and other blood borne and sexually transmitted infections. During 2013 the number of beneficiaries reached up to 129. Within the framework of the project VCT, legal, psychological counseling were implemented. Within the frames of the program the beneficiaries received disposable syringes, alcoholic pads and condoms. The project is funded by Global Fund and is implemented jointly with Mission East Armenia.

### HIV prevention in Armenia

“HIV prevention in Armenia” project is implemented in Vanadzor, Gyumri and Yerevan cities within youth aged 15-23. Within the frames of the program peer to peer educational seminars were organized for students as well as Q&A sessions were organized for the faculty members. The students were provided with the informative materials on HIV/AIDS, as well as they were provided with counseling through calls and visits. The project is funded by American Red Cross.

### Healthy Generation

In 2011-2013, with the support of “Ashtarak-Kat” CJSC, Red Cross Youth Department implemented “Healthy Generation” project. The aim of project was to introduce young pupils the ways of maintaining a healthy lifestyle, as well as to encourage and enable to make a right choice in their health-related issues.
By peer-to-peer method Young volunteers introduced to pupils the basic steps in maintaining a healthy lifestyle, including healthy food choices and proper diet, clean environment, free from bad habits and a physically active lifestyle. At the end of each training course, jointly with young volunteers and schoolchildren, environmental field trips and other activities to promot healthy lifestyles were organized.


ԿՅԱՆՔՆ ԱՌԱՆՑ ԾԽԱԽՈՏԻ


Լավ սովորեմ
ու առողջ լինեմ՝
Երեքշաբթի
Հինգշաբթի
Ուրբաթ
Չորեքշաբթի
Աշտարակ
Վերջապես
Շատ ժամանակ
Միշտ
մաքուր եմ պահելու
իմ միջավայրը



## Երևանն առանց ծխախոտի

2013թ նոյեմբեր ամսին մեկնարկեց «Երևանն առանց ծխախոտի» ծրագիրը՝ ՀՀ նախագահի և Հայկական Երիտասարդական հիմնադրամի կողմից տրամադրված դրամաշնորհով:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել հանրության իրազեկվածությունը ծխախոտի վնասակար ազդեցության վերաբերյալ՝ այդ կերպ նպաստելով ծխողների թվի կրճատմանը:

Ծրագրի շրջանակներում մայրաքաղաքի 10 դպրոցում՝ 13-14 տարեկան շուրջ 1000 աշակերտի համար կազմակերպվել են հատուկ մշակված դասընթացներ, որոնք վարել են Երիտասարդական Կարմիր խաչի կամավորները: Դասընթացների ընթացքում ԵԿԽ կամավորները աշակերտներին ներկայացրել են ծխելու վնասների վերաբերյալ տեղեկատվություն, անցկացվել է նկարչական մրցույթ:

Խնդրի մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով պատրաստվել և հեռարձակվել է սոցիալական հոլովակ, տեղեկատվական բաններներ են տեղադրվել սոցիալական ցանցերում:

Նոյեմբերի 21-ը աշխարհի բազմաթիվ երկրներում հայտարարված էր չծխելու օր, և օրվա խորհրդի մասին տեղեկացնելու նպատակով կազմակերպվել էր հանրային միջոցառում: Միջոցառման օրը Հյուսիսային պողոտայում տեղադրվել էին հատուկ դեկորացիաներով տաղավարներ, որոնք պատկերում էին կյանքը՝ առանց ծխախոտի և կյանքը՝ ծխախոտի ազդեցությամբ: Երիտասարդական Կարմիր խաչի կամավորները անցորդներին լուսաբանում էին ծխելու վնասների մասին՝ նրանց տրամադրելով տեղեկատվական նյութեր և խրախուսելով նետել ծխախոտը համապատասխան արկղի մեջ, որի համար անցորդները՝ որպես պարգևատրում, ստանում էին քաղցրավենիք:

## ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

Իտալական Կարմիր խաչի աջակցությամբ 2013թ.-ի սեպտեմբերից Երիտասարդական բաժինն իրականացնում է «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը: Ծրագիրը նպատակաուղղված է ՄԻԱՎ-ի արդյունավետ հակազդմանը՝ բնակչության առավել խոցելի խմբերի (թմրամիջոցների ներարկային օգտագործողների) շրջանում, և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բուժման, խնամքի ու աջակցության խթանմանը՝ քարոզչության միջոցով:

Ծրագրի շրջանակներում սերտ համագործակցություն է հաստատվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի «Ցերեկային կենտրոն»-ի հետ, որի նպատակն է նվազեցնել ՄԻԱՎ-ով ապրող և ներերակային թմրամիջոցներ օգտագործող մարդկանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական մեկուսացումը և նպաստել նրանց ինտեգրմանը, սոցիալական վիճակի բարելավմանը և հոգևոր արժեքների ծեռքբերմանը:

Ծրագրում ընդգրկված Երևանի և Վանաձորի շուրջ 100 շահառուների տրամադրվել են սննդի և հիգենիկ պարագաների փաթեթներ, նրանց համար կազմակերպվել են տեղեկատվական դասընթացներ և քննարկումներ:

Երևան քաղաքում Երիտասարդ կամավորների ուժերով ուսուցողական դասընթացներ են կազմակերպվել նաև լրագրողների և բժշկական հաստատությունների շուրջ 350 ուսանողների համար:

## Yerevan Without Tobacco

In November 2013, ARCS implemented “Yerevan without tobacco” project, with the support of RA President and the Armenian Youth Foundation grant.

The aim of the project was to raise public awareness on the harmful consequences of tobacco, to reduce the number of smokers.

In the framework of the project, in 10 schools of Yerevan city Red Cross Youth volunteers conducted specially designed sessions on smoking dangers for 1,000 students aged 13-14. Information materials also were distributed, drawing contest was organized.

In order to increase public awareness, special social ad was developed and broadcast, information banners were placed in social networks.

21 November was declared as a No smoking day in a number of countries and thematic text messages were sent to cell phone subscribers in order to inform about the Day.

That day on North Avenue 2 pavilions with special decorations were located, presenting the life with the devastating consequences of tobacco and without.

ARCS volunteers were informing the passers about the smoking dangers, by providing them with informational materials, encouraging them to throw cigarette butts in the appropriate boxes. For that they were awarded with sweets.

## HIV Prevention in Armenia

Red Cross Youth, with the support of Italian Red Cross, has been implementing “HIV Prevention in Armenia” project since September 2013. The program aims at both advancing the impact of effective HIV prevention among vulnerable and high-risk groups (e.g. injection drug users (IDUs)) and advocating people living with HIV (PLHIV) and IDUs to HIV/AIDS treatment, care and support.

Within the framework of the project ”HIV Prevention in Armenia”, Armenian Red Cross Society collaborates with Armenian Apostolic Church Araratian Patriarchal Diocese Day Center.

The Center aims at reducing social isolation of injection drug users and people living with HIV, promoting their integration into society, as well as contributes to improving their social status and connecting them to spiritual values.

Over 100 beneficiaries from Yerevan and Vanadzor included in the project were provided with food and hygienic kits, workshops and discussions were organized for them.

Young volunteers also organized training courses for journalists and medical institutions for over 350 students in Yerevan.



# «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժումը**

# “GRATSIA” INTERNATIONAL REHABILITATION CENTER

**The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients’ vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment**

**«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում:**

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապևտ, հոգեբան և սպորտային մարզիչ:

Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժություն սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԷՆԱՌ» բաժանմունք:

Իր գործունեության ընթացքում կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել շուրջ 10 000 հիվանդ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: Կենտրոնում տարեկան կտրվածքով բուժում է ստանում 900-1000 հաշմանդամ, 280 վետերան, 5 փախստական, սոցիալապես անապահով խավի մոտ 526 ներկայացուցիչ:

Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամ հիվանդներին՝ ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում:
Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կիլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին:

Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստրատոր Ալեքսանդր Մնացականյանը:

**The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psycho-social rehabilitation and sanatorium-and-spa treatment.**

In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.
The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services-diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesitherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologist's room, "SKENAR" Department.

During its activities about 10 000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center. During the year, 900-1000 disabled people, 280 veterans, 5 refugees, about 526 socially vulnerable people are cured in the Center.

Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.
"Pharos" choir and "Kilikia" basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.

The Center is lead by Doctor and administrator  Aleksandr Mnatsakanyan.




MIRAGE

# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# DISASTER MANAGEMENT AND POPULATION MOVEMENT

## Աղետների կառավարման ուղղություն

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետներին նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

### Անվտանգ դպրոցներ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի (ԿԽ և ԿՄ ՄՖ) ֆինանսավորմամբ իրականացրեց «Անվտանգ դպրոցներ» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ամրապնդել Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կարողությունները թիրախային 3 դպրոցների աշակերտների, ինչպես նաև ուսուցիչների շրջանում: Այս ամենը հնարավոր եղավ իրականացնել տեղեկատվական և ուսուցողական հասարակական միջոցառումների, երեխաների շրջանում մանկական վիկտորինա մրցույթների, երկրաշարժի, բնական և մարդածին աղետների վերաբերյալ դասընթացների կազմակերպման շնորհիվ: Թիրախային դպրոցներին բաժանվեցին ուսուցողական նյութեր, ուսուցիչների համար կազմակերպվեցին «Աղետների նախապատրաստում» և «Տարհանում» թեմաներով դասընթացներ, որից հետո դպրոցներում անցկացվեցին տարհանման վարժանքներ: Ծրագրի նշանակալի ձեռքբերումն այն է, որ աշակերտները իրենց ընտանիքի անդամների հետ միասին մշակեցին իրենց «Աղետի ընտանեկան պլանը», որը թույլ է տալիս նրանց աղետի դեպքում արագ և կազմակերպված արձագանքել: Թիրախային դպրոցներում կազմակերպվեցին նաև նկարչական մրցույթներ և լավագույնները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով:
Հրավիրվեց մամլո ասուլիս՝ նվիրված ԱՌՆ միջազգային օրվան, որի նպատակն էր բնակչության շրջանում աղետների նախապատրաստման ոլորտում բարձրացնել իրազեկման մակարդակը: Կազմակերպվեցին նաև ԱՌՆ ոլորտում իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ նվիրված դեկտեմբերի 7-ին՝ ծրագրում չընդգրկված դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար: Բոլոր թիրախային դպրոցներում զինղեկների հետ միասին վերանայվեցին տարհանման սխեմաները, որից հետո դպրոցներին տրամադրվեցին տարհանման նշաններ, կրակմարիչներ և հակահրդեհային վահանակներ: Կամավորները ևս ամրապնդեցին ԱՆ և ԱՌՆ ոլորտում իրենց հմտությունները՝ հատուկ իրենց համար կազմակերպված նմանատիպ դասընթացների միջոցով:

### Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ

Հաշվետու տարում ԱԸ-ն Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսավորմամբ շարունակեց իրականացնել «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիրը:

## Disaster Management direction

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response (DPR) structure of the Armenian Red Cross Society (ARCS).

### Safe Schools

Armenian Red Cross Society implemented “Safe Schools” project with the financial support of the International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC). The aim of the project was to strengthen capacities and knowledge on DRR of targeted 3 schools’ pupils as well as teachers. This was achieved through informative and educational public campaigns, quiz contests for children, training sessions on earthquake and natural and man-made disasters. Educational materials were distributed, and trainings entitled “Disaster Preparedness”, “Evacuation” and non structural mitigation approach were held for teachers of the targeted schools, after which evacuation drills in schools were conducted. Significant achievement of the project is the fact that pupils having taken part in a non-structural mitigation activity entitled “Family Emergency Plan” have developed, jointly with their family members, own realistic Family Emergency Plans which allow to have a structured and timely reaction and protection in the case of a disaster. Also, drawing competitions were organized in 3 targeted schools where best pictures were awarded with incentive prizes.
Press conference dedicated to World DRR day was organized for increasing level of awareness on disaster preparedness among population, as well as awareness raising event dedicated to December 7 was organized for pupils and teachers from different schools not targeted by the project. Moreover, all targeted schools’ evacuation schemes were revised with military instructors and all targeted schools were distributed evacuation signs, fire panels and fire extinguishers which is also one step forward to be more secured. Volunteers also improved their skills and knowledge on Disaster Preparedness and DRR through the likewise training sessions organized for them.

### Building Safe and Resilient communities

In 2013 NS continued implementation of “Building Safe and Resilient communities” project with the financial support of Austrian De-




International Federation
of Red Cross and Red Crescent Societies


with funding from
Austrian

Ծրագրի իրականացման համար, որպես թիրախ ընտրվել էին Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքները, ինչպես նաև Լոռու մարզի չորս գյուղական համայնքներ: Այսպիսով ծրագրի շահառուներն են մոտ 68.800 ուսուցիչ, դպրոցական և նրանց հարազատները, ինչպես նաև 37.150 բնակիչ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանում գյուղական և քաղաքային համայնքների աղետների նկատմամբ բնակչության խոցելիության նվազեցմանը:
Ծրագրի առաջին և երկրորդ ուղղությունների շրջանակներում, որն է՝ «Քաղաքային և գյուղական համայնքներում աղետներին արձագանքման և նախապատրաստման կարողությունների զարգացում», մշակվեց Խոցելիության և կարողությունների գնահատման զեկույց Դարպաս և Կուրթան համայնքների համար, որն իր մեջ ներառում է տվյալ համայնքի աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլան և ռիսկային գոտիների քարտեզ: Ձևավորվեցին Համայնքային երկու թիմ (ՀԹ)՝ յուրաքանչյուրում 20 անդամ, որոնք հանդիսանում են տեղական կարողություն և բնակչության պաշտպանության գործիք: Ավելին՝ նրանք նպաստելու են նաև ԱՌՆ համայնքակենտրոն ծրագրերի իրականացմանը:
ՀԹ-ին ԱՌԿ ոլորտի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ տալու և նրանց պատրաստվածության բարձր մակարդակը ապահովելու համար ՀԿԽԸ «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվեցին տեսական և գործնական հետևյալ դասընթացները՝ «ԱՌՆ ոլորտի հիմնական ուղղությունները, այդ թվում խոցելիություն, կարողությունների գնահատում», «Հյոգոյի գործողությունների ծրագիր», «Կլիմայի փոփոխություն և հարմարվողականություն», «Հնարավոր քայլերը աղետի ժամանակ», «Սոցիալ-հոգեբանական աջակցություն», «Փրկարարական հիմունքներ և առաջին օգնություն» և այլն: Այնուհետև, ձեռք բերված գիտելիքները ամրապնդելու նպատակով՝ ՀԹ-երի համար կազմակերպվեցին դաշտային ուսումնավարժանքներ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության մարզային փրկարարական ծառայության և «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ: Նախքան ուսումնավարժանքները ՀԹ-երին տրամադրվեց հատուկ փրկարարական գույք և հագուստ, ինչպես նաև առաջին օգնության պարագաներ: Երևանի և Լոռու մարզի թիրախային 14 դպրոցների 80 ուսուցիչների համար կազմակերպվեց նաև հատուկ դասընթաց: Օրակարգում ընդգրկված էին «Առաջին օգնության», «Աղետների ռիսկերի նվազեցում», «Կլիմայի փոփոխություն» և այլն: Հետագայում դասընթացին մասնակցած ուսուցիչները իրենց աշակերտների համար կազմակերպեցին նմանատիպ դասընթացներ, ինչպես նաև բաժանեցին «Աղետի ընտանեկան պլան» թերթիկ-ուղեցույցը՝ իրենց ընտանիքի անդամների հետ ընտանեկան պլան մշակելու համար, որի հիման վրա թիրախային դպրոցներում կազմակերպվեցին մրցույթներ: Յուրաքանչյուր դպրոցում նաև կազմակերպվեցին նկարչական մրցույթներ, որոնցից երեք լավագույնները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Լավագույն նկարներով կազմվեց 2014թ.-ի օրացույց: Ապահովելու համար դպրոցների անվտանգությունը՝ բոլոր թիրախային դպրոցներում զինղեկերի հետ վերանայվեցին տարհանման սխեմաները, որից հետո դպրոցներին բաժանվեցին տարհանման նշաններ, հակահրդեհային

velopment Agency and Austrian Red Cross. Yerevan, Vanadzor and Stepanavan cities, as well as four rural communities of Lori region are targets of the project. Thus, the beneficiaries of the project are approximately 68.800 teachers, schoolchildren and their relatives as well as 37.150 persons. The main objective of the project is to contribute towards reducing vulnerability to disasters of rural and urban population in Armenia.
Within the frames of the first and second directions of the project, which is "Increasing capacities of rural and urban communities to anticipate, respond and recover from disasters" VCA was finalized for Darpas and Kurtan communities, which includes Disaster Preparedness and Response plan of action and community risk areas mapping for each community. Two community teams were formed consisting of 20 members in each team, which represents a local capacity and a tool for protection of the population. Moreover, they will support the implementation of community centred projects aimed at disaster risk reduction. To provide the CTs with corresponding knowledge in the sphere of Disaster Risk Reduction and ensure a high level of preparedness, ARCS jointly with "LORE" rescue team organized the following theoretical and practical trainings: "General concepts in DRR including Vulnerability, Capacity Assessment", "Hyogo Framework of Action", "Climate Change & Adaptation", "Actions During Disasters", "First Aid and Rescue Skills", "Psychosocial Support" etc. In order to strengthen gained knowledge simulation drills were organized for CTs with regional Rescue Service of RA Ministry of Emergency Situations and "LORE" Rescue Service. Moreover, before simulation exercises, special rescue equipments and uniforms, as well as first aid kits were distributed to CTs. Also, ToT for 80 teachers from targeted 14 schools of Yerevan and Lori region was organized. First Aid, DRR related issues, Climate Change etc. were included in the agenda. Then the trained teachers organized similar trainings with their pupils, as well as distributed Family Emergency Plan checklist for developing own realistic Family Emergency Plans with their family members, based on which competitions were organized in targeted schools. Also, drawing competitions were organized in each targeted school where the best three drawings were awarded with incentive prizes. Moreover, based on the best drawings, calendar for 2014 year was developed. To ensure school safety level all targeted schools' evacuation schemes were revised with military instructors and all targeted schools were distributed evacuation signs which is also one step forward to be more secured. After which evacuation drills practically have been conducted. Within the framework of the third direction of the project, which is "Strength-

վահանակներ և կրակմարիչներ, ինչը առավել պաշտպանված լինելու ևս մեկ գրավական է:

Ծրագրի երրորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «Խթանել Կարմիր խաչի ընկերությունների, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների, իշխանությունների և միջազգային կազմակերպությունների համակարգումը և համագործակցությունը ազգային մակարդակում», հանդիպում տեղի ունեցավ Լոռու մարզի մարզպետի, ՀԿԽԸ նախագահի, գլխավոր քարտուղարի, ՀԿԽԸ Լոռու մարզի մասնաճյուղի նախագահի և ԱԿ/ԲՏ բաժնի ղեկավարի միջև: Հանդիպման ընթացքում ներկայացվեց և քննարկվեց ծրագիրը: Մարզպետը հայտնեց իր պատրաստակամությունը համագործակցելու և ծրագրին աջակցելու գործում: Ավելին, հաշվետու տարում մարզային մակարդակում մի քանի հանդիպումներ կազմակերպվեցին տեղական իշխանությունների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ինչպես նաև կազմակերպվեց հանդիպում Լոռու մարզի փրկարարական ծառայությունում: Հանդիպումների նպատակն էր ներկայացնել ծրագիրը, քննարկել ձեռքբերումները, ինչպես նաև հետագա քայլերը:

Ծրագրի չորրորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «Խթանել ազգային մակարդակում գիտելիքի և փորձի փոխանակումը, ինչպես նաև ԱՌՆ կարողությունների զարգացումը Կարմիր Խաչի ընկերությունների, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և հասարակական գործիչների միջև», երկու տարածաշրջանային հանդիպում տեղի ունեցավ Վրաստանում ծրագրի անձնակազմի և հիմնական շահագրգիռ կողմերի միջև:

### Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում

2013թ.-ին ԱԸ-ը շարունակեց իրականացնել «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի երկրորդ փուլը, որը համաֆինանսավորվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO), Դանիական, Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների կողմից և ԿԽ և ԿՄ ՄՖ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի առաջին փուլի թիրախ հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի 9 համայնքներին և 32 դպրոցներին ավելացան ևս հինգ համայնքներ և 33 դպրոցներ: Ծրագրում ընդգրկված շահառուներն են մոտ 21.970 դպրոցականներ և նրանց հարազատները՝ թվով մոտ 65.910 մարդ, ինչպես նաև 14 համայնքներից 30 650 բնակիչ:

Ծրագրի հիմնական ուղղություններից առաջինի շրջանակներում, որն է՝ «Համայնքների դիմակայունության հզորացում», Ազգային ընկերությունը «ԼՈՌԷ» փրկարար ջոկատի, Շիրակի մարզային փրկարար ծառայության, տարածքային և տեղական իշխանությունների հետ համատեղ 14 ՀԹ-երի (9 գործող և 5 նոր) պատրաստվածության բարձր մակարդակը ապահովելու համար կազմակերպեցին չորս դաշտային ուսումնավարժանքներ: Ուսումնավարժանքները բաղկացած էին հետևյալ փուլերից՝ 1) Անցնել գետը և ճանապարհատրանսպորտային վթարից տուժածներին տրամադրել առաջին օգնություն 2) Աղետների ռիսկի կառավարման գիտելիքի ստուգում: Ուսումնական վարժանքների շնորհիվ նոր ՀԹ-երը ձեռք բերեցին գործնական

ening co-ordination and co-operation between RC Societies, CSOs, national authorities and international agencies on national level” a meeting took place among the Governor of Lori region, the ARCS President and Secretary General, as well as the president of ARCS Lori regional branch and the head of DM/PM department where the project was presented and discussed. The Governor expressed his willingness and readiness to cooperate and support the project’s implementation. Moreover, during the reporting year several meetings were organized in regional level with regional and local authorities, stakeholders, as well as meeting was organized in Lori regional Rescue Service. The aim of the meetings was to present the project, discuss achievements and future steps/activities. Within the framework of the fourth direction of the project, which is “Enforcing transnational knowledge sharing, exchange of experience and capacity building on CBDRR between RC National Societies, CSOs and public actors” two regional meetings were organized in Georgia for programme staff and key stakeholders.

### Building Safer Local Communities in South Caucasus

In 2013 NS continued implementation of “Building Safer Local Communities in South Caucasus” project’s 2nd phase. The project is co-funded by the European Commission’s Humanitarian aid and Civil Protection Directorate General (ECHO), Danish, Icelandic and Austrian Red Cross Societies in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies. Five new communities and 33 new schools were added to already targeted nine communities and 32 schools. Thus, the beneficiaries of the project are approximately 21.970 schoolchildren and their relatives, about 65.910 persons, as well as 30.650 inhabitants of the fourteen communities. Within the frames of the first direction of the project, which is “Strengthening communities’ resilience”, NS jointly with “LORE” rescue team, Shirak Regional Rescue Service, regional and local authorities organized four simulation drills for 14 community teams (9 existing and 5 new CTs) to ensure a high level of preparedness. The simulation consisted of 1) Crossing river and providing first aid to the car accident’s injured people and 2) Testing of DRM knowledge. With the help of simulation drills new CTs gained practical skills and strengthened their knowledge on DRM, as well as existing CTs refreshed their theoretical and practical skills. Pupils from targeted schools also participated at the drills for encouraging their future integration in the team and community based DRR. Moreover, NS together with Shirak Regional Rescue Service organized a Competition for 14 targeted CVDPRT in Arapi community. The competition consisted of 5 parts: 1) Crossing river,

հմտություններ և ամրապնդեցին իրենց գիտելիքները ԱՌԿ ոլորտում, ինչպես նաև գործող ՅԹ-երը թարմացրեցին իրենց տեսական և գործնական հմտությունները: Թիրախային դպրոցների աշակերտները նույնպես մասնակցեցին ուսումնական վարժանքներին՝ հետագայում թիմում, իսկ համայնքային մակարդակում ԱՌՆ ուղղված գործողություններին իրենց ներգրավումը խրախուսելու համար:
Ավելին, Ազգային ընկերությունը Շիրակի մարզային փրկարար ծառայության հետ համատեղ կազմակերպեց մրցույթ Առափի համայնքում թիրախային 14 ՅԹ-երի համար: Մրցույթը բաղկացած էր 5 մասից՝ 1)Գետանցում, 2)Առաջին օգնության տրամադրում, 3) Աղետների ռիսկի կառավարման գիտելիքի ստուգում 4) Վթարից հետո տուժածներին մեքենայից տարհանում 5) Ծանր իրերի/նյութերի բարձրացում և տուժածներին առաջին օգնության տրամադրում: Հաղթող ճանաչված երեք ՅԹ-ները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Բոլոր մասնակիցներին տրվեցին մասնակցության հավաստագրեր: Լավագույն փրկարար և «Լավագույն առաջին օգնություն ցուցաբերող» անվանակարգերում հաղթողները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Մրցույթին ներկա էր մոտ 400 մարդ, որոնց թվում էին Շիրակի մարզպետը, ՅՅ Արտակարգ Իրավիճակների նախարարը, ՅԿԽԸ նախագահը, Դանիայի և Վրաստանի Կարմիր խաչի ընկերությունների ներկայացուցիչները, ինչպես նաև 280 ՅԹ-ի անդամներ, մոտ 50 անդամ՝ Փրկարար ծառայությունից, մարզային (առողջապահության վարչություն, ոստիկանություն և այլն) և տեղական իշխանություններից: Հաշվետու տարում տպագրվել են «Աղետների նախապատրաստման և արձագանքման գործողությունների պլան» և «Գործընկերների քարտեզագրում» խորագրով ձեռնարկներ, և բաժանվել են համապատասխան շահագրգիռ կողմերին:
Փորձի փոխանակման և տեղեկատվական մի քանի հանդիպումներ կազմակերպվեցին Շիրակի մարզի երկու հրշեջ ծառայություններում՝ 14 ՅԹ-երի (280 անդամներ) համար: Այցելության նպատակը փորձի փոխանակումը, ինչպես նաև աշխատանքային մեթոդների և հրշեջների առկա սարքավորումների ներկայացումն էր՝ արտակարգ իրավիճակի ժամանակ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար: Թիրախային ՅԹ-երի անդամները գործնականում օգտագործեցին սարքավորումներից մի քանիսը, ծանոթացան հրշեջ ջոկատների հմտություններին և կարողություններին:
Ծրագրի երկրորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «Իրազեկման մակարդակի բարձրացում», հաշվետու ժամանակահատվածում ուսուցողական նյութեր մշակվեցին, տպագրվեցին և բաժանվեցին բոլոր 65 թիրախային դպրոցներին: «Կենսաապահովում և կլիմայի փոփոխության հարմարվողականություն» խորագրով դասընթացներ անցկացվեցին 14 ՅԹ-երի, մարզային և տեղական իշխանությունների, ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերի համար:
Դպրոցներն ավելի անվտանգ դարձնելու նպատակով Ազգային ընկերությունը Գյումրու 65 թիրախային դպրոցների զինղեկների համար կազմակերպեց դասընթացներ: Քննարկվեցին տարհանմանն առնչվող ՅՅ օրենսդրությունը, ընթացակարգերը, յուրաքանչյուր անձի պարտականությունները և տարհանման պլանի վերանայման գործընթացին առնչվող հարցեր: Տարհանման սխեմաները վերանայելուց հետո բոլոր թիրախային դպրոցներին տրամադրվեցին նշանները՝

2) Providing first aid, 3) Testing DRR knowledge, 4) Evacuating injured people from car after accident, 5) Lifting heavy goods/materials and providing first aid to affected people. The three winner community teams were awarded with incentive prizes. All participants were given participants' certificate. Also, the best rescuer and the best first aider were nominated and awarded with incentive prizes. There were about 400 participants; among them were Governor of Shirak region, Minister of Emergency Situation of RA, President of Armenian Red Cross Society, representatives from Danish and Georgian Red Cross Societies, as well as 280 CVDPRT members, about 50 representatives from Rescue Service, regional (Health department, Police, etc) and local authorities.
Within the reporting year "Disaster preparedness and mitigation plan of action" and "Who does What and Where" manual have been printed and distributed to relevant stakeholders for their future use.
Several experience sharing and informative meetings were organized at two fire-fighters stations of Shirak region for 14 CVDPRTs (280 members). The aim of the visit was to share experience, introduce working techniques and existing equipment of fire-fighters to ensure effective cooperate in case of emergency. The targeted community teams practically used some of the equipments; learn about the skills and capabilities of fire-fighters team. Within the framework of the second direction of the project, which is raising the level of populations' preparedness, within the reporting period educational materials were developed, printed and distributed to all 65 targeted schools. Trainings titled "Household Protection and Climate Change Adaptation" were conducted for 14 CTs, regional and local authorities, as well as key stakeholders.
In order to make schools more secure NS organized workshops for military instructors of 65 targeted schools in Gyumri. Evacuation related RA legislation, procedures, responsibilities of each person and plan revision process were discussed. After revision of evacuation schemes, evacuation signs were distributed to all targeted schools for building schools evacuation capacities. Moreover, NS together with Shirak regional Education Department organized evacuation drills at 82 targeted schools dedicated to the World Disaster Day.
Within the framework of the third direction of the project, which is "Developing Community Based Disaster Risk Reduction Model", several Regional Coordination Commission meetings were organized for regional and local authorities, key stakeholders aiming to present and discuss project achievements and planned/future activities. Steering Committee was established within cooperation MoU signed among ARCS, OXFAM GB Armenia, UNICEF Armenia, "Save the Children" Armenia, as well as the Ministry of Education







դպրոցների տարհանման կարողությունները մեծացնելու նպատակով: ԱԸ-ը Շիրակի մարզի Կրթության բաժնի հետ միասին թիրախային 82 դպրոցներում Աղետների միջազգային օրվան նվիրված կազմակերպեց տարհանման վարժանքներ:
Ծրագրի երրորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «ԱՌՆ համայնքային մոդելի մշակում», մի քանի մարզային համակարգման հանձնաժողովի հանդիպումներ կազմակերպվեցին մարզային և տեղական իշխանությունների, հիմնական շահագրգիռ կողմերի համար, որոնց նպատակն էր քննարկել ծրագրի
ձեռքբերումներն ու հետագա գործողությունները: Համագործակցության հուշագրի շրջանակներում, որը ստորագրվել է ՀԿԽԸ, ՕՔՍՖԱՄ ՄԲ, ՅՈՒՆԻՍԵՖ և «Սեյվ դը չիլդրեն» Հայաստանյան գրասենյակների, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունների և ԱՌՆ ազգային պլատֆորմի միջև, ստեղծվեց հանձնախումբ: Հունվարին տեղի ունեցավ հանձնախմբի հանդիպում համայնքային մակարդակում, որին մասնակցեցին հուշագրի բոլոր կողմերը: Հանդիպման ընթացքում յուրաքանչյուր կազմակերպություն ներկայացրեց իր ծրագրի արդյունքները, ձեռքբերումները, քաղած դասերը, ինչպես նաև խոսեց հետագա գործունեության մասին: Հաշվետու տարում ԱԸ տեղական և մարզային իշխանությունների հետ համատեղ մշակեց ԱՌՆ համայնքային մոդել և տրամադրեց շահագրգիռ կողմերին ազգային, մարզային և տեղական մակարդակում: Նկարահանվեց նաև տեսաֆիլմ, որտեղ ներկայացվեց ծրագրի իրականացման ամբողջ գործընթացը:
Վեց թիրախային համայնքներում, որպես կանխարգելման ծրագիր ստեղծվեց աղբահանության կենտրոնացված համակարգ: Նախ՝ թիրախային վեց համայնքների բնակիչները՝ իրենց միջոցներով և տեղական իշխանությունների ղեկավարությամբ, մաքրեցին բոլոր գետերի հուները, հակասելավային ջրանցքները և աղտոտված բոլոր հասարակական վայրերը: Որից հետո համայնքներին տրամադրվեց 185 աղբարկղեր, որոնք տեղադրվեցին նախապես սահմանված վայրերում: Համայնքապետարանը տարեկան սպասարկման պայմանագիր կնքեց կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ, ովքեր պարբերաբար աղբահանություն կիրականացնեն համայնքներում, որն իր հերթին խնդրին կապահովի երկարատև լուծում:
Ծրագրի չորրորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «Բնակչության շրջանում Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում», ԱԸ-ը տրամադրեց ծրագրի շրջանակներում մշակված և տպագրված ուսուցողական նյութեր Երևանի փրկարար ծառայությանը, որն էլ իր հերթին Երևանի տասը դպրոցներում նախաձեռնեց և իրականացրեց տարհանման ուսումնավարժանքներ և իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որոնց մասնակցեց նաև ԱԸ-ը: Հաշվետու տարում մշակվեց Ազգային ընկերության հաղորդակցության ռազմավարությունը:
Ծրագրի հինգերորդ ուղղության շրջանակներում, որն է՝ «Հարավային Կովկասում համագործակցության ընդլայնում», մի քանի կլոր սեղան-քննարկումներ կազմակերպվեցին համայնքային իշխանությունների, ՀԹ անդամների և բնակչության մասնակցությամբ, որոնց ընթացքում ներկայացվեցին և

and Science, the Ministry of Emergency Situation and Armenian DRR National Platform/ARNAP foundation.  On January Steering Committee was organized at community level with high level participants of all MoU parties. During the meeting each organization presented its project's results, achievements, lessons learned, as well as spoke about planned activities. NS jointly with regional and local authorities developed Community Based Disaster Risk Reduction Model and shared with national, regional and local stakeholders.  Also project video was produced where the whole implementation process of project activities is presented.
As a mitigation project centralized garbage removal system was established in 6 targeted communities. First, 6 targeted communities' inhabitants with coordination of local authorities, cleaned by their means all river banks, mudflow channels and public places polluted by garbage in their area. After which, 185 garbage boxes were provided to communities and boxes were placed on preliminary defined locations. Moreover, community hall made an annual service agreement with communal service providing organizations and/or individuals who will regularly remove garbage from community which in turn ensures long term solution to this problem.
Within the framework of the fourth direction of the project, which is raising public awareness on DRR and Climate Change, NS provided educational materials developed and printed within the frames of the project to Yerevan Rescue Service department who initiated awareness raising activities and simulation evacuation in 10 schools of Yerevan, as well as participated in several events. Also, NS Communication Strategy was developed.
Within the framework of the fifth direction of the project, which is "Enhancing South Caucasus cooperation" several round table meetings were organized for presenting and discussing mid-term and final results, achievements of the project and lessons learned in each of 14 targeted communities with involvement of community authorities, community team members and inhabitants.  Also, "Case Studies and Best Practices" Manual of the project was developed and shared with relevant stakeholders at country level. The Head of Disaster Management and Population Movement Department participated at the Global Platform for DRR meeting in Geneva held by UNISDR. During the meeting, being key note speaker, ARCS representative presented the NS experience in community education and awareness raising and its importance in community resilience during which several practical examples registered within the project were presented. Moreover, the head of Disaster Management and Population Movement Department participated in the Central Asia and Southern Caucasus regional workshop in Almaty. The workshop was organized by ECHO with the purpose to exchange information, highlight good practices and lessons learned.

քննարկվեցին ծրագրի միջանկյալ և վերջնական արդյունքները, ծրագրի ձեռքբերումները և քաղած դասերը: Բացի այդ մշակվեց և երկրի մասշտաբով համապատասխան շահագրգիռ կողմերին բաժանվեց ծրագրի վերաբերյալ «Նպատակային ուսումնասիրություն և լավագույն փորձ» խորագրով ձեռնարկը: ԱԿ/ԲՏ բաժնի ղեկավարը մասնակցեց Աղետների ռիսկի նվազեցման միջազգային պլատֆորմի կողմից Ժնևում կազմակերպված ԱՌՆ միջազգային ժողովին: Ժողովի ընթացքում, լինելով հիմնական զեկուցող, ՀԿԽԸ ներկայացուցիչը ներկայացրեց ԱԸ փորձը՝ համայնքներում կրթության և իրազեկման մակարդակի բարձրացման վերաբերյալ, ինչպես նաև շեշտեց համայնքների աղետներին դիմակայելու կարևորությունը և ներկայացրեց ծրագրի ընթացքում գրանցված մի քանի գործնական օրինակներ: Բացի այդ ԱԿ/ԲՏ բաժնի ղեկավարը մասնակցեց Ալմաթայում կայացած Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային սեմինարին: Սեմինարը կազմակերպվել էր Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության կողմից, որի նպատակն էր տեղեկատվության փոխանակումը, լավագույն փորձի և քաղած դասերի ներկայացումը: ԱԿ/ԲՏ բաժնի ղեկավարը ներկայացրեց «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի ձեռքբերումներն ու քաղած դասերը: Հաշվետու տարում Երևանում կազմակերպվեց Հարավային Կովկասի համագործակցության հանդիպում: Օրակարգում ընդգրկված էին՝ ծրագրի գործունեությունը, ձեռքբերումները, քաղած դասերը, առաջին և երկրորդ փուլերի մարտահրավերները, ծրագրի երրորդ փուլը, ինչպես նաև Հարավային Կովկասում ԱՌՆ ռազմավարության զարգացումը: Հաշվետու տարում տեղի ունեցավ նաև տարածաշրջանային հանդիպում Թբիլիսիում: Օրակարգում ընդգրկված էին՝ ծրագրի գործունեությունը, ձեռքբերումները, քաղած դասերը, առաջին և երկրորդ փուլերի մարտահրավերները, ծրագրի երրորդ փուլը, ինչպես նաև Հարավային Կովկասում ԱՌՆ ռազմավարության զարգացումը:

### Օգնություն Արմավիրի մարզի կարկուտից տուժած համայնքներին

2013թ.-ի մայիսին տեղի ունեցած աննախադեպ կարկուտը վնասեց ՀՀ Արմավիրի մարզի կեսից ավելի համայնքների գրեթե ամբողջ բերքը: Հունիսին ԿԽ/ԿՄ ՄՖ-ի Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱԸ մարդասիրական օգնություն (սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ) տրամադրեց Արմավիրի մարզի 14 ամենատուժած համայնքներին: ԱԸ-ը, հիմք ընդունելով կառավարության և ՀԿԽԸ-ի կողմից հաշվարկված կորուստները, հիմնական կարիքները հոգալու նպատակով 14 ամենատուժած համայնքների բնակիչներին տրամադրեց 2090 սննդի և հիգիենիկ փաթեթ: Ընդհանուր առմամբ 983 ընտանիք՝ 4020 մարդ, ստացավ մարդասիրական օգնություն: ԱԸ շարունակեց տրամադրել մարդասիրական օգնություն ՀՀ Արմավիրի մարզի կարկուտից տուժած բնակչությանը Ավստրիական և Դանիական Կարմիր խաչի ընկերությունների ֆինանսավորմամբ: Բամբակաշատ համայնքի 72 ընտանիք՝ 198 մարդ, իսկ Նալբանդյան համայնքի 1085 ընտանիք՝ 2700 մարդ ստացան սննդի կապոցներ: Բաշխման գործընթացի ժամանակ ԱԸ սերտորեն համագործակցեց մարզային և տեղական իշխանությունների

The head of DM/PM department presented ARCS achievements and lessons learned within "Building Safer Local Communities in South Caucasus" project. During reporting year South Caucasus Steering Committee and Cooperation Meeting was organized in Yerevan. Programme update and lessons learned, Challenges from phase one and two, Programme activities, Third phase of DRR programme, Strategic development for DRR in South Caucasus were included in the agenda. Also, regional meeting was organized in Tbilisi. Programme update and lessons learned, Challenges from phase two, Programme activities, Third phase of DRR programme, Strategic development for DRR in South Caucasus were included in the agenda.

### Relief for affected by hail communities in Armavir

In May, an unprecedented hail destroyed almost the total yield capacity of more than half of the communities in RA Armavir region. In June IFRC's Disaster Relief Emergency Fund (DREF) supported the Armenian Red Cross Society in delivering immediate humanitarian assistance (food and basic non-food items) to 14 most affected communities of Armavir region. The ARCS based on the level of losses indicated by Government and ARCS assessments distributed 2,090 parcels of food and 2,090 hygiene parcels aimed to cover the basic needs of the beneficiaries in the 14 most affected communities. Overall, 4,020 people or 983 families received DREF support. During the distribution process, ARCS was actively cooperating with regional and local authorities. Moreover, ARCS regional branch volunteers as well as local people were actively assisting the distribution process, which was conducted in four days according to the schedule and was highly broadcasted by media.

### Relief for affected by hail communities in Armavir

In May 2013, an unprecedented hail destroyed almost the total yield capacity of more than half of the communities in RA Armavir region. In June IFRC's Disaster Relief Emergency Fund (DREF) supported the Armenian Red Cross Society in delivering immediate humanitarian assistance (food and basic non-food items) to 14 most affected communities of Armavir region. The ARCS based on the level of losses indicated by Government and ARCS assessments distributed 2,090 parcels of food and 2,090 hygiene parcels aimed to cover the basic needs of the beneficiaries in the 14 most affected communities. Overall, 4,020 people or 983 families received DREF support. NS continued providing humanitarian assistance to affected communities of RA Armavir region by financial support of Austrian and Danish Red Cross Societies. 72 families or 198 people of Bambakashat community, as well as 1085 families or 2700 people of Nalbandyan community have received food parcels. Dur-

հետ: Չորս օր տևած բաշխման գործընթացին, որը հեռարձակվեց ԶԼՄ-ներով, ակտիվորեն մասնակցեցին ՀԿԽԸ մարզային մասնաճյուղի կամավորները, ինչպես նաև տեղի բնակիչները:

## Կլիմայի արևելյան հարթակ

2013 թվականին ԱԸ-ը սկսեց իրականացնել «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության, Ավստրիական զարգացման գործակալության, Ավստրիական Կարմիր խաչի ընկերության և Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականության ձևավորմանը, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների զարգացմանը Արևելյան Գործընկերության երկրներում, ինչպես նաև կլիմայի փոփոխության և բնապահպանական ոլորտում քաղաքականության առաջընթացին:

Հաշվետու տարում ստեղծվեց «Կլիմայի հայկական հարթակի» ցանցը, որում ընդգրկված են բնապահպանական, կլիմայի փոփոխության, երիտասարդական և այլ ոլորտներում գործող ավելի քան 20 ակտիվ հասարակական կազմակերպություններ: Ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր ԱԸ-ի և «Կլիմայի հայկական հարթակ» ցանցի միջև՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում միասին բարձրացնելու իրազեկման մակարդակը, ամրապնդելու արդյունավետ երկխոսությունը պետական մարմինների հետ, ինչպես նաև համագործակցելու ՀԿ-ների և համապատասխան պետական կառույցների հետ:

Կազմակերպվեց երկօրյա հանդիպում բնապահպանական և կլիմայի փոփոխության քաղաքականության խնդիրները քննարկելու, ինչպես նաև հուլիսի սկզբին կայանալիք «Կլիմայի հայկական հարթակ» ցանցի աշխատանքներին նախապատրաստվելու համար: Այնուհետև, կազմակերպվեց երկու սեմինար՝ կլիմայի փոփոխության քաղաքականության առաջնայնությունների վերաբերյալ: Սեմինարի ընթացքում քննարկվեցին ՀԿ-ների հնարավոր ներդրումները և կարողությունները՝ ուղղված «Կլիմայի հայկական հարթակ» ցանցի զարգացմանն ու ընդլայնմանը: Թեժ քննարկումների և բանավեճերի արդյունքում ընտրվեցին հինգ առաջնային ոլորտներ կլիմայի խոցելիության գնահատման իրականացման համար, մասնավորապես՝ Աղետների ռիսկի նվազեցում, առողջապահություն, գյուղատնտեսություն, էկոհամակարգեր և ջրային ռեսուրսներ: Բացի այդ մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին՝ մասնակցելու ԿԽԳ զեկույցի պատրաստման գործընթացին՝ թեմատիկ ուսումնասիրություններ պատրաստելով յուրաքանչյուր ընտրված ոլորտի համար: ՀԿԽԸ-ի և «Կլիմայի հայկական հարթակ» ցանցի միջև փոխըմբռնման հուշագիր ստորագրելու, ինչպես նաև ԿԽԳ գործընթացին և ներկայիս փուլը ներկայացնելու նպատակով Ծաղկաձորում կազմակերպվեց երկօրյա հանդիպում: Կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ մարդկանց իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով «Կլիմայի հայկական հարթակ» ցանցը Վայոց Ձորի մարզի 12 դպրոցներում կազմակերպեց նկարչական մրցույթներ: Նախքան մրցույթները թիրախային 12 դպրոցների 24 ուսուցիչների համար կազմակերպվեց հատուկ դասընթաց կլիմայի փոփոխության հարմարվողականության թեմայով: Այնուհետև ուսուցիչներն իրենց դպրոցների երկրորդից իններորդ դասարանների աշակերտների համար անցկացրեցին նույնատիպ դասընթացներ: Բոլոր

ing the distribution process, ARCS was actively cooperating with regional and local authorities. Moreover, ARCS regional branch volunteers as well as local people were actively assisting the distribution process, which was conducted in four days according to the schedule and was highly broadcasted by media.

## Climate Forum East

In 2013 NS started implementing “Climate Forum East” project which is co-funded by the European Union, Austrian Development Agency, the Austrian Red Cross Society and World Wide Fund for Nature. The main objective of the project is to contribute to global policy making processes on Climate Change, to Civil Society development in Eastern Partnership (EaP) countries, to advance EaP political priorities in the area of environment governance and climate change.

Within the reporting year “Armenain Climate Forum” Network was developed which includes about 20 active NGOs working in the field of environment, climate change, youth, etc. Moreover, NS signed MoU with the “Armenian Climate Forum” Network aiming to jointly advocate and influence decision makers on necessity of climate change adaptation, raise awareness on necessity of climate change adaptation decision makers and general public, coordinate and cooperate between Civil Society organizations and relevant governmental institutions in the field of climate change adaptation, etc.

Two day meeting was organized to discuss Environmental and Climate Change Policy issues and prepare for initiating Armenian Climate Forum national platform in the beginning of July. The presentations were followed by hot debates among participants over presented topics which was considered as a positive signal for establishment of “Armenian Climate Forum” Network.

Following this event, two national workshops on CC policy priorities has been organized. During the Policy priority workshop capacities and possible contribution for developing and enhancing the Armenian Climate Forum Network have been discussed. Moreover, as a result of tough discussions and debates five policy priorities, namely Disaster Risk Reduction, Health, Agriculture, Ecosystems and Water Resources for conducting Climate Vulnerability Assessment (CVA) have been identified. Furthermore, the participants expressed readiness to contribute to the process of CVA by preparing Case Studies for each selected policy area. For signing Memorandum of Understanding between ARCS and “Armenian Climate Forum” network as well as for presenting the CVA process and its current stage, two day meeting was organized in Tsaghkadzor. In order to raise people’s awareness level on CCA “Armenian Climate Forum” network organized drawing competitions at 12 schools of Vayots Dzor region. Before conducting drawing, ToT was organized

դպրոցներին բաշխվեցին ծրագրի շրջանակներում տպագրված «Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը» խորագրով բուկլետներ, ինչպես նաև անհրաժեշտ գրենական պիտույքներ և նկարչական պարագաներ: Արդյունքում ընտրվեց 3 հաղթող նկար (ընդհանուր 36 նկար) յուրաքանչյուր դպրոցից և հաղթող աշակերտները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Մշակվեց և տպագրվեց ծրագրի տարեկան օրացույցը, որը ներառում է ոչ միայն երեխաների նկարները, այլև ցանցի անդամ կազմակերպությունների լոգոները և կլիմայի փոփոխությանն ուղղված հաղորդագրությունները, ինչն էլ ապահովում է «Կլիմայի արևելյան հարթակ» ցանցի և «Կլիմայի հայկական հարթակ» ծրագրի տեսանելիությունը:

### Ականներից և պատերազմի այլ պայթուցիկ մնացորդներից տուժածների և նրանց կարիքների վերաբերյալ տվյալների հավաքագրումը Հայաստանում

2013թ.-ին ԱԸ-ն սկսեց իրականացնել «Ականներից և պատերազմի այլ պայթուցիկ մնացորդներից տուժածների և նրանց կարիքների վերաբերյալ տվյալների հավաքագրումը Հայաստանում» ծրագիրը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է հավաքագրել, կենտրոնացնել և վերլուծել ականներից տուժածների տվյալները ու կարիքները տեղեկատվական կառավարման համակարգի միջոցով և հասանելի դարձնել շահագրգիռ կողմերին: Կառավարությանն օժանդակելու ՀԿԽԸ դերից բացի, ծրագիրը թույլ կտա հոգալ ականներից տուժածների կարիքները և խթանել նրանց սոցիալ-հոգեբանական վերաինտեգրումը հասարակության մեջ: Ծրագրի ավարտին 400 տուժածներից և նրանց ընտանիքների անդամներից հատուկ համակարգով մշակված հարցաթերթիկների միջոցով կհավաքագրվի տեղեկատվություն, որն էլ իր հերթին կընձեռի հնարավորություն՝ պատշաճ կերպով հոգալու նրանց կարիքները կառավարության կողմից: Հաշվետու տարում ՀՀ բոլոր մարզերում հարցաթերթիկները լրացվել և հավաքագրվել են:

### Աջակցություն սիրիահայերին

ԱԸ-ն 2013թ. հոկտեմբերից 2014թ. հունիսն ընկած ժամանակահատվածում Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության օժանդակությամբ, իրականացնում է «Աջակցություն սիրիահայերին» ծրագիրը: Ծրագիրը նպատակ ունի նպաստել Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսապայմանների բարելավմանը: Ծրագրում ներգրավված է 300 սիրիահայ ընտանիք, ընդհանուր առմամբ՝ 1235 մարդ: Հաշվետու տարում 300 ընտանիքներին տրամադրվել է հիգիենիկ պարագաների կապոցներ՝ յուրաքանչյուր ընտանիքին մեկ կապոց: Ծրագիրն իրականացվում է՝ սերտորեն համագործակցելով ՀՀ Սփյուռքի նախարարության, Պետական միգրացիոն գործակալության, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ:

for 24 teachers from targeted 12 schools on Climate Change Adaptation. Afterwards the teachers conducted training on CCA at their schools with the pupils from 2-9 grades. Moreover, all schools have been provided with brochures titled “Climate Change Adaptation” developed within the frame of the project, as well as with relevant stationeries and drawing materials. As a result, 3 drawings from each 12 school (totally 36 drawings) have been selected and awarded with incentive prizes. Also, project annual calendar was developed and printed which includes not only children drawings, but also logos of the Network member organizations and their relevant messages on Climate change issue, thus ensuring visibility of the Armenian Climate Forum Platform and the Climate Forum East Project.

### Mines and Explosive Remnants of War/EPW Victims Causality and Needs Data Collection in Armenia

In 2013 NS started implementing “Mines and Explosive Remnants of War/EPW Victims Causality and Needs Data Collection in Armenia” project funded by the International Committee of the Red Cross. The main objective of the project is to collect, centralize, analyze mine/ERW casualty data and victim needs through the Information Management System for Mine Action (IMSMA) and make it available to the interested stakeholders. Besides, the ARCS’s positioning and fulfilling its auxiliary role to authorities, the activity will help meeting the needs of mine/ERW victims and support their socio-economic reintegration into society. After the project the needs of 400 mine/ERW victims and their families will be better understood through the collection and the systematization of IMSMA questionnaires in view of the establishment of an adequate response to their needs by the Armenian authorities. Within the reporting year the collection of IMSMA questionnaires have already been be carried out in all regions of Armenia.

### Relief for Syrian Armenians

NS by the finance of Austrian Development Agency and with the support of Austrian Red Cross Society started implementing “Relief for Syrian Armenians” project, from October 2013 to June 2014. The main objective of the project is to contribute in enhancing livelihood conditions of Syrian Armenians in Armenia. 300 Syrian Armenian families are involved in the project: overall, 1235 people. Within the reporting year vulnerable families have been provided with hygiene parcels. The project is implemented in close cooperation with the RA Ministry of Diaspora, “State Migration Service”, “Center for Coordination of Syrian Armenians’ Issues” NGO, “State Employment Service Agency” and National Centre of Development of Small and Medium businesses.

# Բնակչության տեղաշարժ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Բնակչության տեղաշարժի (ԲՏ) ուղղության շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում ապաստան հայցողներին և փախստականներին առաջնային մարդասիրական, բժշկական, սոցիալ-հոգեբանական աջակցություն և իրավաբանական խորհրդատվության տրամադրում, սահմանային վերահսկողության իրականացում, փախստականների մեծածավալ ներհոսքի դեպքում՝ վաղ ազդարարման համակարգի ստեղծում, փախստականների ինտեգրմանը նպաստող գործունեություն ծավալում: ՀԿԽԸ-ն ակտիվորեն մասնակցում է նաև ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին:

## Փախստականների ընդունում և ինտեգրում

2013 թ. ընթացքում ՀԿԽԸ-ի բնակչության տեղաշարժի ուղղությունը շարունակել է իր գործունեությունը փախստականներին և ապաստան հայցողներին աջակցության ոլորտում՝ ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից ֆինանսավորվող «Փախստականների ընդունում և ինտեգրում» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն և կողմնորոշում՝ սոցիալական, աշխատանքի տեղավորման, առողջապահական և իրավական հարցերում: Իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնցից է «Եկամուտը խթանող գործունեության» ծրագիրը, որի արդյունքում 88 շահառուներ ստացել են իրենց անհրաժեշտ գործիքները սեփական գործ սկսելու կամ այն բարելավելու համար: Ընտրված շահառուներն անցել են նաև վերապատրաստում՝ Հայաստանում սեփական գործ սկսելու վերաբերյալ:

Տարվա ընթացքում «Փախստականների ընդունում և ինտեգրում» ծրագրի շրջանակներում կազմակերպությունը համապատասխան քայլեր ձեռնարկեց շահառուների կարիքներին պատշաճ արձագանքելու համար: 2000-ից ավելի շահառուներ ստացան խորհրդատվություն և ուղղորդում: Տարվա ընթացքում 149 կանայք ստացել են հիգիենիկ պարագաներ, 6 ընտանիքներ՝ կենցաղային պարագաներ, հաշմանդամներին տրվել են լսողական և հենաշարժողական սարքեր, 38 շահառուներ ստացել են ակնոցներ: Առավել կարիքավորներին տրամադրվել է առավելագույնը 15 հազար դրամի օժանդակություն՝ հիմնական կարիքների կամ տրանսպորտային ծախսերի համար:

Աջակցություն է ցուցաբերվել նաև երեխաներին՝ 18 երեխաներ ստացել են մանկական սայլակներ, մինչև 2 տարեկան 30 երեխա ստացել է մանկական հիգիենիկ պարագաներ, իսկ 20 երեխա՝ 6 ամիս ստացել է մանկական կաթի կտրոն: Օժանդակություն են ստացել նաև 97 դպրոցականներ՝ 50.000-ական դրամի տեսքով՝ դպրոցական պարագաներ, կոշիկ և հագուստ գնելու նպատակով: 50 փախստական և սիրիահայ երեխաներ ստացել են հագուստի գնման, իսկ 104 ապաստան հայցողներ և փախստականներ՝ ձմեռային հագուստի և կոշիկի գնման կտրոններ:

Ամռանը, երիտասարդ կամավորների օգնությամբ, ՀԿԽԸ-ն կազմակերպեց ճամբար՝ ընդգրկելով սիրիահայերի և փախստականների երեխաներին:

# Population movement

The Population Movement direction of the Armenian Red Cross is providing asylum seekers and refugees in RA with basic humanitarian, medical, psychosocial assistance and advocacy. The direction is also implementing regular border monitoring, establishes an Early Warning System in case of a massive refugee influx and is involved in activities aimed at integration of refugees, as well as prevention and fighting against trafficking in RA.

## Refugee Reception and Integration

During 2013 ARCS Population Movement direction continued its activities in supporting refugees and asylum seekers in the frame of "Refugee Reception and Integration" project funded by the UN High Commissioner of Refugee Agency.

In the frames of the project beneficiaries were provided with advice and guidance to social, employment, health and legal matters. Number of projects have been Implemented, one of which was "Income generating activities" program. 88 beneficiaries have received necessary tools and equipment to start their own business or to improve it. Selected beneficiaries participated in the trainings to start their own business in Armenia.

During the year, in the frame of "Refugee Reception and Integration" program the organization took appropriate steps to meet the needs of beneficiaries. More than 2,000 beneficiaries have received advice and guidance. During the year, 149 women have received hygiene products, 6 families were provided with household utensils, disabled people were given hearing and mobility devices, 38 beneficiaries received glasses. Most vulnerable people were provided with assistance up to 15.000 AMD for transportation expenses or basic needs.

Children also were in the focus, 18 children have received wheelchairs. 30 children up to 2 years were provided with children's hygiene products, and 20 children for 6 months provided children's milk coupons. 97 schoolchildren also got support 50,000 AMD each for school accessories, shoes and clothes. 50 Syrian refugee children have received coupons for purchasing clothes and 104 asylum seekers and refugees winter clothing and shoes purchase coupons.

In summer, with the help of young volunteers, ARCS organized a tent camp, where Syrian Armenian children were also involved.

In the frames of "Refugee Reception and Integration" project, Children's corner was opened in Reception Center for Asylum Seekers. Information meetings were organized in Darbnik and Reception Center for Asylum Seekers, First aid, tuberculosis and HIV / AIDS prevention training sessions were conducted for beneficiaries.



«Փախստականների ընդունում և ինտեգրում» ծրագրի շնորհիվ Ապաստան հայցողների հատուկ կացարանում բացվեց մանկական սենյակ:
Կազմակերպվել են բազմաթիվ տեղեկատվական հանդիպումներ Դարբնիկում և Ապաստան հայցողների հատուկ կացարանում, շահառուների համար անցակցվել են Առաջին օգնության, տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելման դասընթացներ:

## Աջակցել  առավել կարիքավորներին

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը 2013թ.նոյեմբերից մինչև 2014թ. մայիսն իրականացրել է «Աջակցել  ամենախոցելիներին», ծրագիրը, որը ֆինանսավորվել է Հայաստանում Ամերիկյան դեսպանատան կողմից: Ծրագրի նպատակն էր աջակցել 30 ամենախոցելի սիրիահայ ընտանիքներին՝ սեփական գործ սկսելու:
Ծրագրի շրջանակներում ընտվել են փոքր բիզնեսի 30 սիրիահայ ընտանիքների նախագծեր: Ընտրված շահառուները կստանան համապատասխան գործիքներ ու սարքավորումներ՝ շահույթն ապահովող գործունեություն իրականացնելու համար և կմասնակցեն սկսնակների համար բիզնեսի դասընթացների:
Դասընթացները կօգնեն նրանց համապատասխան գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել Հայաստանում բիզնես սկսելու համար: Կքննարկվեն իրավական և տնտեսական հարցեր:

## Փախստականների գերմանական ակադեմիական նախաձեռնություն (ՓԳԱՆ) կրթաթոշակային ծրագիր

Հայկական կարմիր խաչի ընկերությունը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է “Փախստականների գերմանական ակադեմիական նախաձեռնություն” (ՓԳԱՆ) կրթաթոշակային ծրագիրը, որի նպատակն էր աջակցել փախստական երիտասարդներին, ստանալու բարձրագույն և մասնագիտական կրթություն Հայաստանի բուհերում և քոլեջներում:
Ծրագրի շրջանակներում փախստականի կարգավիճակ ունեցող 3 ուսանողներ, ըստ իրենց ակադեմիական առաջադիմության և  ֆինանսական խոցելիության աստիճանի, ստացել են ֆինանսական աջակցություն, ինչպես նաև՝ խորհրդատվություն կրթական ոլորտին առնչվող հարցերում: Այդպիսով նրանք հնարավորություն են ստանում ինտեգրվել հայ հասարակությանն ու շարունակել կրթությունը:
ՓԳԱՆ կրթաթոշակը ներառել է ոչ միայն ուսանողի ուսման վարձը, այլև ամսական նպաստ, որը տրամադրվում է ապրուստի, գրենական պիտույքների և տրանսպորտի ծախսերը հոգալու համար: Ծրագրի սկզբից մինչ օրս արդեն օժանդակություն է ստացել մոտ 20 ուսանող, որոնք գտնվում են Հայկական կարմիր խաչի ընկերության և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի մշտական ուշադրության ներքո: Նրանց առաջադիմությունը և խնդիրները պարբերաբար դիտարկվում են թե ուսանողների կացության վայրում, թե ուսումնական հաստատություններում:
Հայկական կարմիր խաչի ընկերությունը Հայկական կամավորական կորպուսի և Հայաստանի՝ Միավորված ազգերի կազմակերպության ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպել է անգերեն լեզվի դասընթացներ, որոնք անցկացվել են ամերիկահայ, իտալացի և ռումին կամավորների կողմից: Խմբերում ընդգրված են նաև տեղացի երիտասարդներ, ինչի շնորհիվ դասընթացը ներառում է նաև ինտեգրման բաղադրիչ:
ՄԱԿ-ի մի շարք գրասենյակների, ինչպես նաև ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ համատեղ, փախստական ուսանողների համար դասընթացներ են անցկացվել նաև՝ համայնքում երիտասարդների դերի, բարձրագույն կրթության, շրջակա միջավայրի, ինֆորմացիոն տեխնոլոգիաների և այլ թեմաների շուրջ:

## Empower the most vulnerable

Armenian Red Cross Society is implementing “Empower the most vulnerable” project funded by USA Embassy in Armenia from November 2013 till May 2014. The aim of the project is to support 30 most vulnerable Syrian-Armenian families to startup income generating activity.
In the frame of the project business projects of 30 Syrian Armenian families were selected. The beneficiaries will receive necessary tools or equipment for their income generating activity and participate in business startup training. The training will help them to get knowledge and skills how to start business in Armenia. Legal and economic issues will be covered.

## Albert Einstein German Academic Refugee Initiative (DAFI) scholarship program

The Armenian Red Cross Society together with the Office of the United Nations High Commissioner for Refugees (UNHCR) has implemented the Albert Einstein German Academic Refugee Initiative (DAFI) scholarship program which aims at supporting refugee youth, men and woman to get higher and professional education in the universities and colleges of Armenia.
In frames of the program, 3 refugee students based on academic excellence and vulnerability criteria, received scholarships, as well as consulting in the field of education in order to integrate in the Armenian society and continue their studies.
DAFI scholarship includes not only the tuition fee of the student, but also monthly allowance to cover expenses for living, local travel as well as student supplies. Within the program, about 20 students have already received support. Their problems but also their academic progresses are under constant attention and monitoring by the ARCS and the UNHCR both at their homes and study institutions.
ARCS, together with the Armenian Volunteer Corps and the Armenian United Nations Association has organized English language courses, which were conducted by American-Armenian, Swedish-Italian and Romanian volunteers. The groups also included local youths adding the integration component to the classes.
Together with a number of United Nations offices in Armenia, but also KASA Swiss humanitarian foundation a series of trainings were prepared and hold for the refugee youth on topics including, but not limited to the role of youth in communities, higher education, stress and time management as well as information technologies.






ARMENIAN RED
CROSS SOCIETY




SympaTex

# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

**ՀԿԽԸ Առաջին Օգնության Ուսումնամեթոդական Կենտրոնի (ԱՕՈՒՄԿ) գործունեության հիմնական նպատակն է բնակչության խոցելիության նվազեցումը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ՝ առաջին օգնության գիտելիքների տարածման միջոցով**

# FIRST AID

**The main goal of the First Aid Training Methodology Center (FATMC) of the Armenian Red Cross Society (ARCS) is decrease the vulnerability of the population towards different types of disasters and accidents by disseminating First Aid knowledge and skills**

## Գործունեության ոլորտները

ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծավալում գործունեություն՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը:
Կենտրոնն իրականացնում է ԱՕ Եվրոպական Խորհրդատվական Կենտրոնի չափանիշներին համապատասխանող առաջին օգնության (ԱՕ) և անվտանգ վարքագծի դաստիարակման (ԱՎԴ) դասընթացներ և սեմինարներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

## Տարվա նվաճումը

2013թ. հունիսի 13-16-ը մասնակցելով Ավստրիայի Վելս քաղաքում կայացած ԱՕ Եվրոպական 27-րդ առաջնությանը (FACE-2013) ՀԿԽԸ հավաքականը գրավել է 5-րդ տեղը՝ 11 տարի շարունակ տեղ գտնելով Եվրոպական լավագույն ԱՕ խմբերի տասնյակում՝

## ԱՕ դասընթացներ

2013-ին իրականացվել են դասընթացներ և սեմինարներ Հայաստանի բնակչության, ՀԿԽԸ կամավորների, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար:
Ընդհանուր առմամբ 2013 թվականի ընթացքում կենտրոնը իրականացրել է 50 դասընթաց և սեմինար, որոնց մասնակցել է շուրջ 1070 մարդ:

## Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների համար

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ «Առաջին օգնության հիմունքների» 6 դասընթաց է իրականացվել ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում: Դասընթացներին մասնակցել է 79 մարդ:

## Առաջին օգնության դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար

Ծրագիրն իրականացվում է Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության և «Բադեն-Վյուրտեմբերգ» հիմնադրամի օժանդակությամբ: Ծրագրի շրջանակներում 2013թ. ընթացքում իրականացվել է 10 ԱՕ դասընթաց, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է143 մարդ:

## ԱՕ հրահանգիչների նախապատրաստում

2013թ. ԿԽՄԿ-ի օժանդակությամբ իրականացվել է ԱՕ հրահանգիչների նախապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են ՀԿԽԸ 18 կամավոր, որոնցից 16-ը որակավորվել են որպես ԱՕ հրահանգիչ: Նշյալ կամավորները ներգրավվել են ԱՕՈՒՄԿ-ի աշխատանքներում:
2013թ. Գերմանական Կարմիր Խաչի մասնագետներն իրականացրել են ԱՕ հրահանգիչների վերապատրաստման սեմինար, որը բաղկացած էր 2

## The Spheres of Activities

The ARCS FATMC disseminates FA knowledge and skills in different groups of population, provides FA treatment at mass gatherings as well as engages in promoting Safe Behavior (SF) among the growing generation.
The FATMC holds trainings and seminars on FA and SB for people of different age and occupational groups in accordance with European standards Advisory Centre guidelines on First Aid.

## The Achievements of the Year

During the 27-th First Aid Convention in Europe (FACE-2013) in Wels, Austria, which was held on July 13-16 in 2013, the ARCS FA National team took the fifth place and thus continued to be among the best European teams over the last eleven years.

## First Aid Trainings

In 2013, trainings and seminars were held for the population of Armenia, ARCS volunteers as well as employees of different organizations. Overall, during the year, the FATMC held 50 trainings and seminars attended by more than 1070 people.

## First Aid Trainings for the RA Population of Borderline Communities

With the support of the International Committee of the Red Cross, six trainings on “Basic First Aid” were held in Tavoush and Syuniq regions. The trainings were attended by 79 people in total.

## First Aid Trainings for the RA Population of Borderline Communities.

The project is implemented by the aid of German Red Cross “Baden-Wurttemberg” Regional Organization “and “Baden-Wurttemberg” Fund. In 2013 in the frames if the program 10 FA seminars were held attended by 143 people.

## FA Instructor Trainings

In 2013, with ths support of The ICRC has assisted in the preparation of the FA instructors training course. ARCS 18 volunteers participate In trainings, 16 of them were qualified as FA Instructors. These volunteers were involved in the FATMC works.

In 2013 German Red Cross specialists held training seminars for instructors, which were consisted of 2 parts: “Organization and Facilitation of Trainings” and “Resuscitation Modern Standards”. Seminars were attended by 20 FA instructors.

մասից՝ «Դասընթացների կազմակերպում և վարում» և «Վերակենդանացման ժամանակակից չափանիշներ»: Սեմինարին մասնակցել է ԱՕ 20 հրահանգիչ:

**Ֆուտբոլի խաղերի սպասարկում**

2013 թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ԱՕ խմբերը իրականացրել են ԱՕ ծառայություն:

**Միջազգային համագործակցություն**

- Այս տարվա ընթացքում ՀԿԽԸ մասնագետներն իրականացրել են հրահանգիչների նախապատրաստման 1 դասընթաց Ղազախստանի Կարմիր Մահիկի մասնագետների համար:
- Առաջին օգնության բաժինի ներկայացուցիչը մասնակցել է 2013թ. սեպտեմբերի 19-21-ը Բուլղարիայի Բուրգաս քաղաքում տեղի ունեցած ԱՕ կրթության եվրոպական համացանցի հանդիպմանը:
- ԱՕ բաժնի 2 ներկայացուցիչ մասնակցել են դեկտեմբերի 12-16 ԱՕ մասնագետների նախապատրաստման սեմինարին՝ մեկը որպես վարող մասնագետ, իսկ մյուսը՝ որպես սեմինարի մասնակից: Սեմինարը կազմակերպվել էր ԱՕ կրթության եվրոպական համացանցը և ԿԽ Միջազգային ֆեդերացիան:

**ԱՕ գիտելիքների տարածում ԶԼՄ-ներում**

Նախապատրաստվել և եթեր է հեռարձակվել մի քանի հեռուստատեսային հաղորդում, որոնց նպատակն էր մարդկանց ծանոթացնել ԱՕ ցուցաբերման տարրական քայլերին:

Բաժնի տարվա շահառուների թիվը - ավելի քան 1000 մարդ:

**Football Event Service**

In 2013, FA teams provided FA service during all the football events in Yerevan within the scope of FIFA and UEFA.

**International Cooperation**

- In 2013 ARCS specialists held one seminar for the specialists of Kazak Red Crescent on preparing FA instructors.
- In 2013 September 19-21 FA department representative participated in FA Educational European Network Meeting in Burgas.
- On December 12-16, 2 representatives of FA department participated in FA training seminars, one as specialist and the other as participant. Seminar was organized by FA Educational European Network and IFRC.

**Dissemination of First Aid Knowledge through Mass media**

Several programs were prepared and broadcasted aimed at making people aware of FA basics

The Number of Beneficiaries – over 1000





# «ՈՐՈՆՈՒՄ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերության «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը

# TRACING SERVICE

The Armenian Red Cross Society Tracing Service is dedicated to tracing and restoration of family links lost through population movement, searching of notifications confirming the place of the grave of the victims of war, conflict and disasters, tracing or assistance in the tracing of documents confirming that a person was subjected to evacuation, captivity, forced departure or forced labor during Second World War

2013թ. ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության «Որոնում» ծառայությունը ստացել է ավելի քան 50 որոնման հայտ: Կատարված աշխատանքների շնորհիվ փակվել է 22 հայտ, որոնցից 14-ը ստացել է դրական, իսկ 8-ը՝ բացասական արդյունք:
Պատրաստվել և եթեր է հեռարձակվել սոցիալական հոլովակ, որը մեծապես նպաստել է «Որոնում» ծառայության լուսաբանմանը:

**Կլոր-սեղան հանդիպում՝ նվիրված Որոնում ծառայության խնդիրներին**
Դեկտեմբերի 16-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության գրասենյակում տեղի ունեցավ կլոր-սեղան հանդիպում, որը նվիրված էր ընկերության Որոնում ծառայության խնդիրներին:
Հանդիպմանը ներկա էին ոլորտում գործող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ՀՀ Սփյուռքի, Արդարադատության և Արտակարգ իրավիճակների նախարարություններից, ՔԿԱԳ-ից, Ոստիկանության ԱՎՎ-ից, Միգրացիոն պետական ծառայությունից, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակից, Կարմիր խաչի միջազգային կոմիտեից:
Կլոր-սեղան հանդիպման նպատակն էր պետական համակարգին ու այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին մանրամասն տեղեկատվություն տրամադրել և պարզաբանել Որոնում ծառայության գործառույթներն ու գործունեության շրջանակը:
Կլոր - սեղան հանդիպման ընթացքում ներկայացվեցին ՀԿԽԸ ուղղությունները, Որոնում ծառայության գործունեությունը, Ընտանեկան կապերի վերականգնման ռազմավարության երեք հիմնական նպատակները, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի և Ազգային ընկերությունների դերն այդ բնագավառում: ԿԽՄԿ Որոնման պատասխանատու Սուսաննա Գասպարյանը ներկայացրեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Որոնում ծառայության գործունեությունը, առանձնահատկություններն ու տարբերությունները:
Մասնակիցների կողմից հարցեր տրվեցին Որոնում ծառայության գործընթացների, վիճակագրական տվյալների, հայտերի բնույթի, վերջին զարգացումների ու միտումների վերաբերյալ: Բոլորն էլ նշեցին, որ նման հանդիպումները մեծապես նպաստում են հետագա համագործակցության ամրապնդմանն ու գործընթացների բարելավմանը:

**Անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրում**
Ղարաբաղյան հակամարտության հետևանքով կա դեռևս 4565 անհայտ կորած անձ, որոնցից 407-ի վերաբերյալ Հայաստանում բացվել են որոնման հայտեր: ԿԽՄԿ-ի պատվիրակությունն անցկացրել է տարբեր գնահատումներ և եկել այն եզրակացության, որ նույնիսկ 17 տարի անց անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:
2008-2009թթ. ընթացքում ՀԿԽԸ-ն և ԿԽՄԿ-ն հաջողությամբ իրականացրել են «Անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրում» (ՄՄՏ)

During 2013, the Armenian Red Cross Society Tracing Service received more than 50 cases. 22 cases have been completed. 14 cases have been closed positively, whereas 8 negatively. A social video advertisement was made and broadcasted by TV channels, in order to promote dissemination of Tracing Service.

**Round Table meeting to discuss Tracing Service issues**
On 16 December, 2013, Round Table meeting took place at the Headquarters of Armenian Red Cross Society, to discuss Tracing Service issues.
Representatives of RA Ministries of Diaspora, Justice and Emergency Situations, Civilian registry office, Passport and Visa Department of RA Police, State Migration Service, UNHCR and ICRC attended the meeting.

The aim of the meeting was to provide detailed information on Tracing Service and clarify its functions and range of activities for the state institutions representatives and other interested parties.

During the Round table-meeting directions of Armenian Red Cross Society, Tracing Service activities, 3 main goals of Restoring Family Links strategy, as well as the role of ICRS, IFRC and National Societies in this sphere were presented. ICRC Tracing Responsible Susanna Gasparyan, presented activities of ICRC Tracing Service, specifications and differences.

Participants asked number of questions about Tracing service processes, statistics, nature of cases, latest developments and tendencies. All of them mentioned that this kind of meetings fosters further strength cooperation and process improvement.

**Missing persons' Ante-mortem data collection**
In the aftermath of the Karabakh conflict as much as 4533 people are still missing, and for 407 of them tracing requests were opened in Armenia. ICRC delegation conducted a variety of assessments and concluded that even 17 years later, families of missing persons have economic, legal, psychological and social needs.
In 2008-2009 ARCS and ICRC has successfully completed joint "Missing persons' Ante-mortem data collection" project. In 2012 the program is continuing. The aim of program is the collecting of detailed dates about missing persons, which will be use during the process to assist with future identifications.

համատեղ ծրագիրը: 2012թ. հոկտեմբեր ամսին որոշում է կայացվել շարունակել այն: Ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում իրականացնել հակամարտության հետևանքով անհայտ կորածների վերաբերյալ ՄՄՏ-ի կանոնավոր հավաքագրում, որը պետք է օգտագործվի աճյունների ինքնության հաստատման գործընթացում:

## Աջակցություն անհայտ կորածների ընտանիքներին

Նախորդ ծրագրի իրականացման ընթացքում առավել ակնհայտ դարձան անհայտ կորած հարազատ ունենալու սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները: Դա հիմք ընդունելով՝ ԿԽՄԿ-ն և ՀԿԽԸ-ն ձեռնարկեցին «Աջակցություն անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ, որի նպատակն է ուժեղացնել «Որոնում» ծառայության կարողությունները՝ հասկանալ և հոգալ ընտանիքների կարիքները: Գնահատելով այդ կարիքները՝ «Որոնում» ծառայությունը ցուցաբերում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, տրամադրում է խորհրդատվություն, ուղղորդում է շահառուներին համապատասխան կազմակերպություններ՝ իրավաբանական խորհրդատվություն ստանալաու համար:

Ծրագրում ներգրավված են Տավուշի՝ 9, Շիրակի՝ 11, Լոռու՝ 21, Արարատի՝ 32 և Արմավիրի՝ 39 անհայտ կորածների ընտանիքներ: Այս մարզերում բնակվող առնվազն 50 ԱԿԸ-ներ կանոնավոր կապ են պահպանում ՀԿԽԸ-ի սոցիալական աշխատողների և մարզային մասնաճյուղերի նախագահների հետ: Մասնաճյուղի հնարավորությունների շրջանակներում՝ հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ են կազմակերպվել բոլոր 5 մարզերում: Առնվազն մեկական միջոցառում է կազմակերպվել Շիրակի, Տավուշի, Լոռու և Արմավիրի մարզերի ԱԿԸ-ների համար: Անհայտ կորածների ընտանիքների անդամների համար կազմակերպվել են տոնական սեղանի ձևավորման դասընթացեր, մասնակիցները ստացել են համապատասխան հավաստագրեր:

Կարմիր խաչն այդ ընտանիքների հետ է եղել նաև Ամանորին՝ կազմակերպելով Նոր տարվա տոնակատարություններ: Տարվա ընթացքում նրանք մասնակցել են նաև մշակութային միջոցառումների ու էքսկուրսիաների:

Շահառու ընտանիքների համար կազմակերպվել են գանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնահետների հետ:

Հունիսի 29-ին՝ Անհայտ կորածների օրը, նրանց ընտանիքները ևս մեկ անգամ հիշեցին իրենց հարազատներին՝ ստեղծելով քարե ծաղիկների կոմպոզիցիա, որտեղ պակասող մեկ թերթիկը խորհրդանշում է կորած անդամին: Այդ կոմպոզիցիաներից կկառուցվի անհայտ կորածներին նվիրված հուշարձան:

Ուղղության գործունեությունն իրականացվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ և աջակցությամբ

## Accompanying Families of Missing Persons

Social and psychological severe consequences of having missing relatives became more obvious during the previous project. Based on this facts ICRC and ARCS launched the “Accompanying Families of Missing Persons” project by the financial support of the International Committee of the Red Cross. The purpose of the program is to strengthen the preparedness of Tracing Service to identify and address the needs of restoring family links. Based on needs TS directs beneficiaries to appropriate organizations for legal consultations.

In the program involved 9 missing persons’ families from Tavush, 11 from Shirak, 21 from Lori, 32 from Ararat and 39 from Armavir region. 50 families of missing persons from these regions regularly contact with ARCS social workers and with chairmen of Regional Branches.

Using the Branches’ abilities, skills development activities were organized in all 4 regions. Buffet courses for families of missing persons in Shirak, Tavush, Lori and Armavir regions were organized and all the participants received certificates.

Red Cross supported those families also organizing New Year and Christmas parties. Events were organized in Shirak, Tavush, Lori and Armavir regions.

Meetings with specialists of Health, Social and Psycological spheres were organized for beneficiary families.

On 29 July, the Day of Missing persons, their family members recalled their relatives one more time, creating stone flowers, where the missing leaf symbolizes the missing person. A monument dedicated to missing persons will be build up from these compositions. The projects in this direction are financed and supported by International Committee of the Red Cross.

Activities of the direction are being imlemented with the financial support of International Committee of the Red Cross



# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

# DISSEMINATION OF RED CROSS PRINCIPLES AND HUMANITARIAN VALUES

## Լրատվություն և լուսաբանում

Կարմիր խաչի սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածման նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (Կխ և ԿՄ) միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), խորհրդանշանների գործածության և չարաշահման, Ազգային ընկերության գործունեության և առաքելության վերաբերյալ, ինչպես նաև ամրապնդել կազմակերպության կապը լրատվամիջոցների հետ՝ աջակցելով
Հայկական Կարմիր խաչ ընկերության, որպես մարդասիրական ոլորտում կառավարությանն օժանդակ կազմակերպության, գործունեության ճիշտ ընկալմանն ու լուսաբանմանը:

ՀԿԽԸ-ն սերտորեն համագործակցում է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ և վերջինիս ֆինանսավորմամբ իրականացնում «Լուսաբանում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում պարբերաբար լուսաբանումներ են իրականացվում տարբեր ուսումնական հաստատություններում, միջազգային և տեղական կազմակերպություններում, ներկայացնելով ՀԿԽԸ գործունեությունը:
Հաշվետու տարվա ընթացքում Կխ և ԿՄ միջազգային շարժման, ՀԿԽԸ գործունեության, ՄՄԻ և լրատվամիջոցների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման մասին կամավորների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և քննարկումներ: Դասընթաց է կազմակերպվել նաև ՀՀ ԲՈւՀ-երի լրագրության ֆակուլտետների ուսանողների համար՝ «Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր խաչի ընկերության գործունեությունը Հայաստանում և ճգնաժամերի և մարդասիրական գործունեության լուսաբանումը» թեմայով:
Մայիսի 8-ին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը միացել էր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի մարդասիրական գործունեության 150-ամյակի կապակցությամբ ամբողջ աշխարհում նշվող միջոցառումներին: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության աշխատակիցները, կամավորները և համակիրները՝ պաստառներով, դրոշներով ու փուչիկներով, վազքով/սպորտային քայլով անցան
Մատենադարան - Մաշտոցի պողոտա - Թումանյան փողոց - Հյուսիսային պողոտա փողոցներով: Ճանապարհին մասնակիցները բաժանեցին տեղեկատվական թռուցիկներ:
Հյուսիսային պողոտայում անցկացվեց ֆլեշ-մոբ՝ 70 կամավորներ կազմել էին “խաչ” ու “150” սիմվոլները: Նույն տեղում տեղադրված էին նաև ՀԿԽԸ ուղղությունները լուսաբանող տաղավարներ:
Տարվա ընթացքում ՀՀ բոլոր մարզերում լուսաբանման աշխատանքներ են

## Information and Dissemination

Dissemination of Red Cross Principles and Values aims at raising public awareness on the history of the Red Cross and Red Crescent (RC/RC) Movement, its components, main principles, International Humanitarian Law (IHL), promoting use and protection of RC Emblem, activities and mission of the National Society , as well as strengthening the contacts with mass media to ensure the correct perception and dissemination of activities of the Armenian Red Cross Society role as an auxiliary to the Government.

ARCS closely cooperates with the International Committee of the Red Cross (ICRC) and with the funding of the latest implements “Dissemination” program. The program has been realized in different directions and includes both regular disseminations in different educational institutions, international and local organizations, as well as a number of public events.

During the reported period, with the purpose of raising the volunteers’ awareness level on International RC/RC Movement, ARCS activities, as well as on organizing effective work with Mass Media Outlets, number of training sessions and discussions were organized. Training titled “ICRC and ARCS activities in Armenia and covering crisis and humanitarian issues” was conducted for the students of Journalism faculties.

On May 8, Armenian Red Cross Society joined to the events, organized to celebrate the 150 years of humanitarian action of International Red Cross Movement.

Employees, volunteers and friends of Armenian Red Cross Society passed jogging by the following direction: Matenadaran-Mashtoth avenue-Tumanyan street-Northern avenue.

Participants disseminated informative flyers.
In Northern avenue flesh-mob took place, where 70 volunteers composed “Cross” and “150” symbols. On the site., stands, presenting ARCS activities were placed.

Dissemination activities were held for more than 10 000 people and more than 5000 printed materials were distributed among population in all regions of RA during the year. “ARCS Annual Re-

տարվել ավելի քան 10 000 մարդու համար և բաշխվել են շարժումը լուսաբանող ավելի քան 5000 տպագիր նյութեր:
Հրատարակվել է «ՀԿԽԸ 2012թ. տարեկան զեկույցը», ՀԿԽԸ գործունեությունը ներկայացնող տեղեկագրերը՝ հունվար-հունիս և հուլիս-դեկտեմբեր ամիսների կտրվածքով, պատրաստվել են տեղեկատվական նյութեր, օրացույցներ, պաստառներ:
ՀԿԽԸ գործունեությունն առավել տեսանելի դարձնելու նպատակով լուսաբանման ծրագրեր են իրագործվում նաև ՀՀ մարզերում: Հաշվետու տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Լոռու մարզում իրականացվել է «Կամավորական ներուժի ընդլայնում» ծրագիրը, որի շրջանակներում Վանաձորի, Մրգահովիտ և Վահագնի գյուղերի 12 ուսուցիչների և համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպվել են լուսաբանման և Առաջին օգնության դասընթացներ:
2013 թվականից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հանդես է գալիս Միջազգային մարդասիրական իրավունքի ազգային դատախաղ – մրցույթի կազմակերպչի դերում՝ երիտասարդության շրջանում Կարմիր խաչի միջազգային շարժման մարդասիրական գաղափարներն ու հիմնարար սկզբունքները լուսաբանելու և տարածելու համար: 2013թ. նոյեմբերին Ծաղկաձորում անցկացված մրցույթում հաղթող ճանաչվեց Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի թիմը: Հաղթողներին մրցանակը հանձնեց ԿԽՄԿ հայաստանյան պատվիրակության ղեկավար Սառա Էպրեխտը:
Տարվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ակտիվորեն համագործակցել է ԶԼՄ-ների հետ՝ լրագրողներին հրավիրելով կազմակերպության համար նշանակալի իրադարձություններին: ՀԿԽԸ աշխատակիցներն ու կամավորները մասնակցել են տարբեր հեռուստահաղորդումների՝ ներկայացներով կազմակերպության գործունեությունն ու առանձին միջոցառումներ: ՀԿԽԸ-ի ծրագրերի և գործունեության վերաբերյալ նկարահանվել է 1 ֆիլմ և 4 տեսահոլովակ: Պաշտոնական կայքին զուգահետ, կազմակերպությունն իր գործունեությունն ակտիվորեն լուսաբանում է նաև սոցիալական ցանցերի միջոցով՝ Facebook, Twitter, YouTube:
Տարբեր լսարաններին ՀԿԽԸ-ի գործառույթները, գործունեության ուղղությունները, սկզբունքներն ու արժեքները ներկայացնելու և նրանց աջակցությունը ստանալու համար 2013թ. մշակվել և հաստատվել է Հաղորդակցման 2013-2020թթ. ռազմավարությունը:

port 2012", newsletters covering  main activities of January-June and July-December periods,  informational materials, calendars and posters were published during the year.
To ensure the visibility if ARCS activities, dissemination projects are being implemented in RA regions. In October-December 2013, "Volunteer Capacity Building" project was implemented in Lori region. In the frames of the project dissemination and First Aid training sessions were organized for 12 teachers and community representatives of Vanadzor city, Mrgahovit and Vahagni communities.

Starting from 2013, Armenian Red Cross Society acts as an organizing party of National Moot Court Competition on International Humanitarian Law to disseminate and promote humanitarian values of the International Movement of Red Cross among Youth. In National Moot Court Competition on IHL 2013, Russian-Armenian (Slavonic) University team was the winner. Sara Epprecht, Head of ICRC Delegation in Armenia, handed the Prize to the winners.
During the year ARCS actively cooperated with Mass Media, inviting Media representatives to cover remarkable events. ARCS staff and volunteers participated in number of TV shows and, presenting organization's activities and projects. 1 films and 4 videos have been made on ARCS projects and activities. In parallel to the official website, ARCS activities have been actively promoted my social networks, such as Facebook, Twitter, YouTube.

In 2013, Communication Strategy 2013-2020 was developed and approved, as a tool to establish effective and long-standing relations with the government bodies, beneficiaries, donors, Mass Media and general public.



# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

# RED CROSS YOUTH

# Երիտասարդական Կարմիր խաչ

Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր Խաչի Ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

**Սոցիալական խնամք**

- իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

**Առողջապահություն**

- իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրեր
- կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում
- գործարկում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի SMS տեղեկատվական գիծ

**Ռեսուրսների հայթայթում**

- իրականացնում է Ռեսուրսների հայթայթման ծրագրեր
- կազմակերպում է քարոզարշավներ, դրամահավաքներ, հանգանակություններ, բարեգործական երեկոներ
- պատրաստում է բացիկներ, զարդեր և այլ նյութեր բարեգործական միջոցառման համար

**Միջազգային համագործակցություն**

- իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանական Կարմիր Խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
- կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

**Կարմիր Խաչի մարդասիրական արժեքների լուսաբանում**

- կազմակերպում է Կարմիր Խաչի գաղափարների լուսաբանում դպրոցներում և բուհերում
- նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը
- հրատարակում է ԵԿԽ գործունեությունը լուսաբանող տեղեկագիր:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

«Ժպիտների ակումբ» - 70 հանրակացարանաբնակ երեխաներ, «Սոցիալ-հոգեբանական ծառայություն փախըստական ծերերին» - 70 ծերեր, ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում – 275000 ընդհանուր ազգաբնակչություն, «Ֆրանսիական խնամակալության ծրագիր» - 18 ծնողազուրկ անապահով երեխաներ, «Առողջ Սերունդ» ծրագիր - 1900 աշակերտ:

# Red Cross Youth

Red Cross Youth (RCY) is young volunteer members organization acting in the frames of the Armenian Red Cross Society (ARCS), founded on 3 November, 1992. It acts in all ARCS regional and territorial branches and works in the following spheres:

**Social care**

- Implementing psychosocial support programs for lonely elderly people living in dormitories, orphans, refugee children and children from vulnerable families.

**Health care**

- Implementing HIV prevention programs
- Organizing different public events and training sessions on healthy life-style in educational institutions
- Launching “SMS informational line” on HIV/AIDS

**Fund raising**

- Implementing Fund Raising programs
- Organizing campaigns, donations, fund raising and charity dinners
- Making post cards, jewellery and other goods for charity events

**International cooperation**

- In the frames of the “European Voluntary Service” is implementing exchange of young volunteers between British and German Red Crosses
- Organizing and participating in international meetings, camps, seminars and training sessions

**Dissemination of Red Cross humanitarian values**

- Organizing the dissemination of Red Cross principles in educational institutions
- Promoting the activation of voluntary movement, recruiting of volunteers and their integration into the activities of ARCS
- Publishing newsletters on RCY activities.

**The number of beneficiaries who were involved in RCY programs during the year:**

“Smiley Club”- 70 children living in dormitories

“Psycho-Social Support for Elderly Refugees” PSS – 70 elderly refugees, “Prevention of HIV/AIDS in Armenia” program – 275000 total population, Lyon Branch of the Committee for Support to the Armenian Red Cross – 18 orphan children, “Healthy Generation”- 1900 pupils.



Կխ ԱԿՄ կանոնադրական հանդիպումներ Սիդնեյում
At RC/RC Statutory Meeting in Sidney



Ամառային ճամբար սփյուռքահայ երեխաների համար
Summer Camp for Syrian Armenian children




Եվրոպական կամավորական ծառայություն ծրագրի մասնակիցների հանդիպում
Meeting of European Voluntary Service project participants



Այցելություն հանրակացարանաբնակ փախստական ծերերին
Visiting refugee elderly people living in dormitories




«Երևանն առանց ծխախոտի» ամփոփիչ միջոցառում Հյուսիսային պողոտայում
“Yerevan without tobacco” project closing event in Northern Avenue



Մոմավառության արարողություն՝ ի հիշատակ ՁԻԱՀ-ից մահացածների
International AIDS Candlelight memorial


ARMENIE

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ**

# INTERNATIONAL ACTIVITIES

**The Armenian Red Cross Society within its activities continuously cooperates with all components of The Red Cross and Red Crescent (RC/RC) International Movement, Governments, international and local organizations**

2013 թվականի ընթացքում ՀԿԽԸ-ն իրականացրել է համատեղ ծրագրեր և համագործակցել է Գերմանական, Դանիական, Ավստրիական, Իսլանդիայի, Ճապոնական, Ամերիկյան, Անդորրայի, Բրիտանական, Կարմիր խաչերի, Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկամասային կազմակերպության, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործակալության, Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի, Գլոբալ Ֆոնդի, Առաքելություն արևելք, Վորլդ Վիժն և մի շարք այլ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Տարվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը մասնակցել է մի շարք կարևոր միջազգային հանդիպումների: ՀԿԽԸ աշխատակիցները և կամավորները ներկայացրել են Ազգային ընկերությունը միջազգային տարբեր նշանակալի միջոցառումների ընթացքում, մի շարք տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային համագործակցության հանդիպումների և դասընթացների, ԱՕ Եվրոպական մրցույթի, պարբերաբար կազմակերպվող սեմինարների և կոնֆերանսների, ուսումնական դասընթացների, ճամբարների և այլ հանդիպումների ժամանակ:

## Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրական հանդիպումները Սիդնեյում

2013թ. նոյեմբերի 12-ից 19-ը Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում տեղի ունեցան Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրական հանդիպումները , որին մասնակցեց նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակությունը: ՀԿԽԸ-ն ներկայացնում էին Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, Վերստուգիչ ֆինանսատնտեսական հանձնաժողովի նախագահ Վիգեն Մելքոնյանը, Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Մարիանա Հարությունյանը և Երիտասարդական բաժնի լիդեր Աննա Գևորգյանը:

## Կանոնադրական հանդիպումների շրջանակներում անցկացվեցին ԿԽՄՖ Գլխավոր ասամբլեան և Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի շարժման Պատվիրակների խորհուրդը

ԿԽՄՖ Գլխավոր ասամբլեան գումարվում է երկու տարին մեկ և ֆեդերացիայի բարձրագույն ղեկավար մարմինն է: Այս տարի ևս ավելի քան 1000 պատվիրակներ և Ազգային 187 ընկերությունների ներկայացուցիչներ հանդիպեցին՝ նշելու իրենց ձեռքբերումները, քննարկելու մարդասիրական խնդիրները և որոշելու հետագա ռազմավարական ուղղությունները: Այս անգամ Ասամբլեայի ուշադրության կենտրոնում փոփոխվող աշխարհում Կարմիր խաչի և Կարմիր մահիկի դերի վերագնահատումն էր՝ թե ինչպես, օգտագործելով ԿԽՄՖ ցանցը, նվազեցնել խոցելիությունը և հզոր Ազգային ընկերություններ կառուցել:

Օրակարգի համաձայն՝ գնահատվել և վերանայվել են 2020 թվականի ռազմավարության հետ առնչվող աշխատանքային և ֆինանսական ցուցանիշները:

Քննարկումներ եղան Հազարամյակի զարգացմանը նպատակներին ԿԽՄՖ-ի ներդրումների, ինչպես նաև հետ-2015-ի զարգացման նպատակների շուրջ:

